

1728

3.K25  
U-61



25 AUG 2005

ԹՐՈՂԵԼՈՎԱԳԻՒՔ ԲՈԼՈՅ ՀԱՅԿԱՆԵՐԻ, ՄԵԽԱԳՃՐ

103 NOV 2009



Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՄԵՆՔ Ի ՆՉԶՊԻՍԻ  
ՓԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ  
ԵՆՔ ՀՐԱՓԱՐՎԱԿՈՒՄ

342/16

9-31962 Արևելանցիւ բույր լեռկիւներ, միացիւ  
25 AUG 2005

25 AUG 2005

3K23

15-61

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Г.П.Б. в ЛНГР.  
А. 193<sup>4</sup>/г  
Акт № 242

ՄԵՆՔ Ի՞ՆՉՊՐԵՍ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՆՔ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ

Թարգման. Լ. Աբովյան  
Խմբագր. Ա. Աղոյան

Инв. № 9880

## ԿՈՒԶԵՍ

1934

ՅԵՐԵՎԱՆ

Перевод из II тома  
Соч., изд. 3-е 1930 г.

11 SEP 2013

1728



В. И. ЛЕНИН

От какого наследства мы отказываемся?

ПАРТИЗДАТ

1934

ЭРИВАНЬ

«Русское богатство»-јл. 1897 № 10-нчм  
պ. Միխայլովսկին, վերապատմելով պ. Մինսկու<sup>1</sup>  
կարծիքը «դիալեկտիկան մատերիալիստների»  
մասին, զրում ե+ «նրան (պ. Մինսկուն) պետք  
ե հայտնի լինի, վոր այդ մարդիկ չեն ցանկա-  
նում վորեւ ժառանգորդական կապ ունենալ  
անցյալի հետ և վճռականապես հրաժարվում են  
ժառանգությունից (եջ 179), այսինքն «60—70-  
ական թվականների ժառանգությունից», վորից  
1891 թ+ հանդիսավորապես հրաժարվում եր  
պ. Վ. Ռոզանովը «Московские ведомости»-ում  
(եջ 178):

«Մուսական աշակերտների» մասին պ. Մի-  
խայլովսկու այս կարծիքի մեջ շատ կեղծիք կա-  
ծիշտ ե, պ. Միխայլովսկին «ժառանգությունից  
ուռասական աշակերտների հրաժարվելու» մասին  
այդ կեղծիքի վոչ միակ և վոչ ել ինքնուրույն  
հեղինակն ե. այդ շատ վաղուց արդեն կը կնում  
են լիբերալ-նարուզնիկական մամուլի գորեթե բո-  
լոր ներկայացուցիչները, մարտնչելով «աշակերտ-  
ների գեմ»: «Աշակերտների» դեմ իր կատաղի  
մարտի սկզբում պ. Միխայլովսկին, վորքան հի-

շում ենք, այդ կեղծիքի մտքին դեռ չեր հասել  
և նրանից առաջ ուրիշները հնարեցին այդ Հետո  
նա հարկ համարեց դրան ել ձայնակցել: Վորքան  
«աշակերտներն» ավելի եյին զարգացնում իրենց  
հայացքները ուսուսական գրականության մեջ, փոր-  
քան նրանք ավելի մանրամասն ու հանգամանուրեն  
եյին արտահայտում մի ամբողջ շարք թե թեսրե-  
տիկ և թե պրակտիկ հարցերի վերաբերյալ — այն-  
քան թշնամական մամուլի մեջ ավելի քիչ կարելի  
յեր ըստ եյության առարկության համովիալ նոր  
ուղղության հիմնական կետերի դեմ, ուսուսական կա-  
պիտավորմբ առաջադիմական, մանր արտադրողին  
նայողնիկաբար իդեալցնելն անմիտ, հասարա-  
կական մտքի և իրավական-քաղաքական հաստա-  
տությունների բացարձությունը ուսուսական հա-  
սարակության տարբեր դասակարգերի նյութա-  
կան շահերի մեջ վորոնելն անհրաժեշտություն  
համարող հայացքի դեմ: Այս հիմնական կետերը  
լուսության եյին արվում, նրանց մասին գերագու-  
սում եյին և գերազանում նն չխոսելու բայց դրա  
փոխարեն այնքան ավելի հերյուրանքներ եյին  
հորինվում, վորոնք վարկաբեկեյին նոր ուղղու-  
թյունը: Ալգալիսի հերյուրանքի, «Վատ հերյու-  
րանքի» թվին ե պատկանում նաև այդ գնայուն  
ֆրազը «Ժառանգությունից ուսուսական աշակերտ-  
ների հրաժարվելու», ուսուսական հասարակության

լավագույն, առաջավոր մասի լավագույն տրադի-  
ցիաներից նրանց կտրվելու, գեմոլիցատական գիծը  
նրանց ձեռքով կտրտելու մասին և այլն, և այլն,  
և ելի ինչպես ասես, վոր չեյին արտահայտվում:  
Նման ֆրազների չափազանց տարածված լինելը  
մեզ դրդում ե կանգ առնել նրանց մանրամասն  
քննարկման և հերքման վրա: Վորպեսզի մեր  
շարադրանքը մերկախոս չթվա, մենք կսկսենք «Ժա-  
ռանգությունը» բնորոշելու համար վերցված յեր-  
կու «գյուղի հրապարակախոսի» միջև պատմական-  
գրականական մի զուգահեռ անցկացնելուց: Վե-  
րապահություն ենք անում, վոր մենք սահմանա-  
փակում ենք բացառապես տնտեսական և հրա-  
պարակախոսական հարցերով, ամբողջ «Ժառան-  
գությունից» միայն այդ հարցերը քննելով և մի  
դողմ թողնելով փիլիսոփայական, գրականական,  
ևստետիկական հարցերը և այլն:

# I

## «ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ» ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Սրանից յերեսուն տարի առաջ, 1867 թվա-  
կանին, «Օтеч. записки» ժողովագում սկսեցին  
տպագրվել Սկալդինի հրապարակախոսական ուր-  
գագծերը «Խուլ անկյուններում և մայրաքաղա-  
քում» վերնագրով: Այդ ուրիշագծերը տպագրվում

Ելին յերեք աարվա ընթացքում՝ 1867—1869:  
1870 թվականին հեղինակը դրանք համաքեց և  
հրատարակեց առանձին գրքով, նույն վերնա-  
գրով\*; Ներկայումս գրեթե բոլորովին մոռացված  
այդ գրքին ծանոթանալը չափազանց ուսանելի յէ  
մեզ հետաքրքրող հարցի, այսինքն դեպի նարոդ-  
նիկները և դեպի «ոռւսական աշակերտները»  
«ժառանգության» ներկայացուցիչների ունեցած  
վերաբերմունքի հարցի տեսակետից: Գրքի վեր-  
նագիրը ճիշտ չե: Հեղինակն ինքն ել նկատել ե  
այդ և իր գրքի առաջաբանում բացատրում ե,  
վոր իր թեման ե՝ «մայրաքաղաքի» վերաբեր-  
մունքը դեպի «գյուղը», այսինքն՝ գյուղի հրա-  
պարակախոսական ուրվագեծերը, և վոր մայրաքա-  
ղաքի մասին առանձնապես խոսելու մաղիր չե:  
Այսինքն, գուցե և մտադիր ել լիներ, բայց այդ  
անհարմար ե համարում: Ու ծնաբաւ—օվ Յօնլորաւ,  
ու ծն Յօնլորաւ—օվ ծնաբաւ (վորովհետեւ կարող  
կլինելի, չեմ ցանկանում, իսկ վորովհետեւ կցան-  
կանայի, չեմ կարող)—այդ անհարմարությունը  
պարզելու համար Սկալդինը մեջբերում և մի  
հույն հեղինակի խոսքերը:

\* Скалдин. «В захолустыи и в столице», Спб.  
1870 (№ 451); Убенք հնարավորություն չունեցինք  
հիշած թվականների «Отеч.зап.»ձեռք բերելու և ոգտա-  
վել ենք միայն այդ գրքից:

Համառոտակի տանը Սկալդինի հայացքների  
շարադրանքը:

Սկսենք զյուղացիական ռեֆորմից, — այդ յելակետից, գեպի վորը մինչև այժմ ել անխուսափելիսրեն պետք ե վերընթանա ամեն վոք, ով ուղում ե շարադրել իր ընդհանուր հայացքները անտեսագիտական և հրավարակախոսական հարցերի վերաբերյալ։ Սկալդինի գրքում զյուղացիական ռեֆորմին չափաղանց շատ տեղ ե հատկացված։ Սկալդինը դրեթե առաջին գրողն ե, վորը սիստեմատիկորեն, ընդարձակ փաստերի և զյուղի ամբողջ կյանքը մանրամասն դիտելու հիման վրա ցույց տվեց զյուղացիների թըշվառ դրությունը ռեֆորմի անցկացնելուց հետո, նրանց կենցաղի վատթարացումը, նրանց տնտեսական, իրավական և կենցաղային կախման նոր ձևերը, — մի խոսքով՝ ցույց տվեց այն ամենը, ինչ այն ժամանականից սկսած այնպես հանգամանորեն և մանրամասն ցույց տվել և ապացուցել են բազմաթիվ հետազոտություններ և նկարագիրներ։ Այժմ այդ բոլոր ճշմարտությունները նորություն չեն։ Այն ժամանակ դրանք վոչ միայն նոր ելին, այլ անվտանություն ելին հարուցում լիբերալ հասարակության մեջ, վորը վախենում եր, թե այսպես կոչված «ռեֆորմի» թերություններից այդ նշումների հետեւ չի թագ-

նըլում արդյոք նըա դատապարտությունը և թագուն ձորատակիրություն։ Սկալդինի հայացքների հետաքրքրականությունն ուժեղանում եւ նրանով ևս, վոր հեղինակը ուժորմի ժամանակակիցն եր (գուցեւ և նույնիսկ նըա մասնակիցը։ Մենք մեր տրամադրության տակ Սկալդինի մասին չունենք պատմա-գրականական վորեւ տեղեկություն և կենսագրական տվյալներ)։ Նըա հայացքները, հետեաբար, հիմնված են թե այս ժամանակվա «մայրաքաղաքը» և թե այն ժամանակվա «գյուղը» անմիջականորեն դիտելու, և վոչ թե գըրքային նյութի կարինետաշին ուսումնասիրման վրա։

Գյուղացիական ուժորմի նկատմամբ Սկալդինի հայացքների մեջ այդ թեմայով քաղցր-մեղքը նարողնիկական ասեկոսեներին սովոր ժամանակակից ընթերցողի ուշագրությունն ամենից առաջ գրավում է հեղինակի չափազանց զգասությունը, Սկալդինը ուժորմին նայում է առանց վորեւ ինքնախաբեյության, առանց վորեւ իդեալացման, նայում է իբրև մի գործարքի յերկու կողմի՝ կալվածատերերի և գյուղացիների միջև, վորոնք մինչև այժմ հողից ոգտվում եյին միասին, վորոշ պայմաններով, և այժմ ահա բաժանվեցին, ընդունակում այդ բաժանների հետ մեկտեղ փոխվեց նաև յերկու կողմի իրավական դրությունը։ Այդ

բաժանքի յեղանակը և յուրաքանչյուր կողմի ստացած բաժնի մեծությունը վորոշող գործոնը կողմերի շահերն եյին։ Այդ շահերը վորոշում եյին յերկու կողմի ձգտությունը, իսկ մի կողմի համար՝ ուժորմի իր մեջ և նըա իրականացման տարրեր հարցերի գործնական զարգացման մեջ անմիջական մասնակցություն ունենալու հնարավորությունը վորոշեց, ի միջի այլոց, մեկ կողմի գեռակշությունը։ Հենց այդպես և հասկանում ուժորմը Սկալդինը։ Ուեֆորմի գլխավոր հարցի, հողաբաժինների և վճարությունների վրա Սկալդինն առանձնապես մանրամասն և կանդ առնում, իր ուրվագծերում հաճախակի վերադառնալով դրանց։ (Սկալդինի գիրքը բաժանվում է 11 ուրվագծի, վորոնք ինքնուրույն բովանդակություն ունեն, ձևով հիշեցնելով գյուղից գրված առանձին նամակներ։ Առաջին ուրվագիծը 1866 թվականն է կրում, վերջինը՝ 1869)։ Սկալդինի գրքում այսպես կոչված «հողասակավ» գյուղացիների մասին, հասկանալի յեւ, ժամանակակից ընթերցողի համար վոչ մի նոր բան չկա, բայց 60-ական թվականների վերջի համար նրա ապացույցները թե նոր և թե արժեքավոր եյին։ Մենք, իհարկե, չենք կըկնի դրանք, և կոչենք միայն յերկութիւ այն բնութագրման առանձնահատկությունը, վոր Սկալդինն և տալիս,—առանձնահատկություն,

վոր Նրան նարողնիկներից շահավետ կերպով  
տարբերում եւ Սկալդինը խոսում է վոչ թե «հո-  
ղասակավության» մասին, այլ «գյուղացիական  
հողաբաժիններից նշանակալի կորումներ անելու»  
մասին (եջ 213, նույնը 214 և շատ ուր., հմտու-  
թի ուրվագծի վերնադիրը), այն մասին, վոր կա-  
նոնադրություններով վորոշված բարձրագույն  
հողաբաժինները գուրս յեկան իսկական հողաբա-  
ժիններից ավելի ցած (եջ 257), բերելով, ի միջի  
այլոց, գյուղացիների չափազանց բնորոշ և տի-  
պիկ կարծիքները ուեֆորմի այդ կողմի մասին\*:  
Այս վաստի բացարություններն ու ապացույց-  
ները Սկալդինի մոտ չափազանց մանրամասն են,  
ուժեղ և նույնիսկ կտրուկ՝ առհասարակ չափա-  
զանց չափավոր, զգաստ և իր ընդհանուր հայցք-  
ներով անշուշտ բուրժուական գրողի համար:  
Նշանակում ե՝ այդ յերեւոյթն ուժգին աչքի յե ըն-  
կել, յեթե Սկալդինի նման զրոյն այդ մասին

\* «Մեր հողը նա (հեղինակի ընդգծումն ե) այն-  
պես կտրտեց, վոր առանց այդ կտրովի հողի ապրել  
չենք կարող. չորս կողմից մեղ շրջապատեց իր դաշ-  
տերով, այնպես վոր տավարն արածացնելու տեղ չու-  
նենք. դե արի հողաբաժնին առանձին վճարի, կտրովի  
հողին ել առանձին, ինչքան վոր կտահանջրա: «Սա  
ինչ կենցաղի բարելավում ե»—ասում եր ինձ մի գրա-  
գետ և աշխարհ տեսած ոյուղացի՝ նախկին բահրատունե-  
րից,—«մեր բահրան թողել են հինը, իսկ հողը կտրել են»:

այդպես յեռմնդով ե խոսում: Վճարումների ծան-  
րության մասին ևս Սկալդինը չափազանց յե-  
ռանդով ու հանգամանորեն ե խոսում, իր դրույթ-  
ներն ապացուցելով բազմաթիվ փաստերով: «Ու-  
ժից վեր տուրքերը»—կարգում ենք II ուրվա-  
գծի (1867) յենթավերնագրում—«նրանց (գյուղա-  
ցիների) չքավորության գլխավոր պատճառն են»,  
և Սկալդինը ցույց ե տալիս, վոր տուրքերը հողից  
գյուղացիների սասացած յեկամալից ավելի բարձր  
են, «Հարկային հանձնաժողովի աշխատություննե-  
րից» ավյաներ ե բերում ուսական տուրքերը բար-  
ձրագույն և ցածրադույն դասակարգերից վերցվող  
տուրքերի բաշխելու մասին, ընդգորում բանից  
գուրս ե գալիս, վոր վերջին դասակարգերի վրա  
ընկնում ե տուրքերի  $76^0/0$ -ը՝ իսկ առաջինների  
վրա՝  $17^0/0$ -ը, այնինչ Արևմտյան Յեկրոպայում ամե-  
նուրեք հարաբերություններն անհամեմատ ավելի  
նպաստավոր են ցածրադույն դասակարգերի հա-  
մար: VII ուրվագծի (1868) յենթավերնագրում  
կարգում ենք. «Չափից անցնող դրամապարհակները  
գյուղացիների չքավորության գլխավոր պատճառ-  
ներից մեկն են», և հեղինակը ցույց ե տալիս, թե  
ինչպես կլանքի նոր պայմանները գյուղացուց մի-  
անգամից պահանջեցին փող, փող և փող, թե ինչպես  
«կանոնագրության» մեջ կանոն եր ընդունված կալ-  
վածատերերին ճորտատիրական իրավունքի համար

ևս վարձատարել (252), թե ինչպես բահրայի բարձրությունը վորոշվել եր «կալվածատերերի», նրանց կառավարիչների և ավագների բուն խոսքերից, այսինքն բոլորովին քմահաճ և նվազագույն վստահելիություն չունեցող տվյալներից» (255), վորի հետևանքով համաճնաժողովների դուրս բերած միջն բահրաները դուրս յեկան իրական միջն բահրաներից ավելի բարձր «Գյուղացիների համար բահրաների ծանրությանն ավելացավ այն հողի կորուստը ևս, վորից նրանք դարեր շարունակ ուժվագում ելին» (258): «Յեթե հետզնան համար հողի գնահատությունը կատարվեր վոչ թե ըստ բահրայի կապիտալացման, այլ ըստ նրա իրական արժեքի՝ ազատազրման դարաշրջանում, ապա հետզնումը կարող եր կատարվել շատ հեշտությամբ և չեր պահանջի նույնիսկ վոչ կառավարության ոժանդակությունը, վոչ ել վարկային թղթերի արտարկում» (264): «Հետզնումը, վոր, ըստ փետրվարի 19-ի Կանոնագրության մտքի, պետք ե թեթևացներ գյուղացիներին և ավարտեր նրանց կենցաղի բարելավումը, հաճախ ելավելի մեծապես ճնշումնե դառնումներանց համար» (269): Մենք այս բոլոր—ինքնին քիչ հետաքրքրական և մասամբ հնացած—քաղվածքները բերում ենք՝ ցույց տալու համար, թե ինչ յեռանդով եր արտահայտվում գյուղացիների շա-

հերի ողափն զբողը, վորը թշնամաբար ե վերաբեր-վում համայնքին և մի ամբողջ շարք հարցերի վերաբերյալ արտահայտվում ե ինչպես իսկական մանչեստրցի: Զավագանց ուսանելի յե նշեր վոր նարողնիկության գրեթե բոլոր ոգտակար և վոչ-ուեսկցիոն դրույթները լիովին համընկնում են այդ մանչեստրցու դրույթներին: Ինքնին հասկանալի յե, վոր քանի վոր Սկալդինն այդուիսի հայացք ունի ուժորմի նկատմամբ, նա վոչ մի կերպ չեր կարող այդ ուժորմի այնպես քաղցրիկ իդեալացնողը դառնալ ինչպես դարձել ու դառնում են նարողնիկները, ասելով, թե նա իւթանել ե ժողովրդական արտազբությունը, թե նա ավելի բարձր ե յեղել արևմտա-յեկվողական գյուղացիական ուժորմներից, թե նա Ուռաւատանն ասես tabula rasa\*: յե դարձել և այն: Սկալդինը վոչ միայն նման բան չի ասել և չեր կարող ասել, այլ ուղղակի ասել ե, թե մեզանում գյուղացիական ուժորմը կատարվեց գյուղացիների համար ավելի քիչ նպաստավոր պայմաններում, թե նա ավելի քիչ ոգուտ բերեց, քան Արևմուաքում: «Հարցը կզբակի ուղղակի», —զբում եր Սկալդինը, —«յեթե մենք մեզ հարց տանք՝ ինչու աղատագրման բարերար հետևանքները մեղանում

\* Մոքուր տեղ: Խմբ.:

և այնպիսի արագությամբ և պրոգրեսիվ աճումով չեն դրսեորդում, ինչպես դրսեորդիցին, որինակ, Պրուսիայում և Սաքսոնիայում ներկա դարի առաջին քառորդում» (221): «Պրուսիայում, ինչպես և ամբողջ Գերմանիայում, հետզնվում էին վոչթե գյուղացիների հողաբաժինները, վորոնք որենքի կողմից վաղուց արդեն ճանաչված էին նրանց սեփականությունն, այլ գյուղացիական հարկադիր պարտույթները կալվածատերի հանդեպ» (272):

Սկալինի գնահատության մեջ սեփորմի տընտեսական կողմից անցնենք իրավականին: Սկալինը համերաշխիքի, պասպորտային սիստեմի և գյուղացիության մեջ «ընդհանուրի» (և մեշանական հասարակության)՝ նրա անդամների վրա սմնեցած նահապետական իշխանության կատաղի թշնամին եւ: III ուրվագծում (1867) նա պնդում է, թե պետք եւ վերացնել համերաշխիքը, չնչահարկը և պասպորտային սիստեմը, թե անհրաժեշտ եւ հավասարեցնել ըստացիածքային տուրքը, պասպորտաները փոխարինել ձրի ու անժամկետ վկայականներով: «Հայրենիքի ներսում պատուաների վրա հարկ գոյություն չունի ուրիշ վոչ մի քաղաքակրթված պետության մեջ» (109): Հայտնի յեւ, վոր այդ հարկը վերացվեց միայն 1897 թվականին: IV ուրվագծի վերնադրում կարդում ենք: «գյուղական հասարակությունների

և քաղաքային խորհուրդների կամայականությունը պասպորտաներ ուղարկելիս և բայցակայող վճարորդներից հարկեր գանձելիս»... «Համերաշխիքը մի ծանր լուծ ե, վոր պետք եքաշեն ճշշտապահ ու տնարար անտեսատերերը թափառողների ու ծույլերի համար» (126): Գյուղացիության արդեն այն ժամանակ նկատվող քայլայումը Սկալինը ցանկանում է բացատրել բարձրացողների և իջնողների անձնական հատկություններով:—«Նեղինակը մանրամասն նկարագրում եւ այն գժվարությունները, վորոնցով Սաղետերուրդում ապրող գյուղացիներն անցազբեր են ստանում և տարկետում (հետաձգում), և ժըստում նրանց առարկությունը, ովքեր կասեն՝ «փառք ասածու, վոր հողագուրկ գյուղացիների այդ ամբողջ մասսան քաղաքների վրա չի գրված, իրենով չի ավելացրել քաղաքների՝ անշարժ սեփականություն չունեցող բնակիչների քանակը» (130)... «Բարբարոսական համերաշխիք»... (131)... «Հարց և առաջ գալիս՝ կարելի յեւ արդյոք քաղաքացիուրեն աղատ անվանել այն մարդկանց, վորոնք նման զրության մեջ են դրված: Այդ արդյոք միևնույն glebae adscripti \* չեն» (132):

\* Հին Հռոմում հողաբաժիններին ամբագրված գյուղացիներ, վորոնք չեյին կարող թողնել այդ հողերը, ինչքան ել դրանք վասարեր լինելին: Խմբ:

Գյուղացիական ռեֆորմն են մեղադրում։ «Բայց  
գյուղացիական ռեֆորմը միթե մեղք ունի նրա  
համար, վոր որենսդրությունը գյուղացուն ա-  
զատելով կալվածատիրոջն ամրագրված լինելուց,  
վոչինչ չնարեց նրան հասարակությանը և ամ-  
բագրավայրին կպած լինելուց փրկելու համար»։  
Վարելով են քաղաքացիական ազատության նշան-  
ները, յերբ գյուղացին չի կարող կարգադրել վոչ  
իր վորուե տեղում գտնվելը և վոչ իր զբաղմունք-  
ների անսակլը» (132)։ Սկալդինը մեր գյուղացուն  
վերին աստիճանի ճիշտ և դիպուկ անվանում է  
«նստակյաց պլուխար» (231)\*։ VIII ուրվագծի  
(1868) վերնագրում կարգում ենք. «գյուղացի-  
ներին իրենց հասարակություններին և հողարա-  
ժիններին ամրացնելը խանդարում ե նրանց կեն-

\*\* Սկալդինը շատ մտնբաման ցույց ե տվել  
այդ վորոշման (պլուխար) վոչ միայն առաջին, այլև  
յերկրորդ մասի ճշտությունը։ Նա իր ուրվագծերում  
շատ տեղ ե հատկացրել գյուղացիների կախյալ դրու-  
թյան ու նրանց չքավորության նկարագրին, բատրակ-  
ների ծանր դրամից անկարագրին, «1868 թ. ավի  
նկարագրին» (Վ ուրվագծի վերնագիրը) և գյուղացու-  
ծառայագրման ու ստորացման ամեն ձևի նկարագրին։  
60-ական թվականներին ել, ինչպես և 90-ականներին,  
մարդիկ կային, վորոնք լուսության երին տալիս և ժըմ-  
տում սովու։ Սկալդինը յեսանդագին ծառանում ե դրանց  
դեմ։ Հասկանալի յե, ավելորդ կլիներ մանրամասն քաղ-  
վածքներ բերել այդ հարցի վերաբերյալ

ցաղի բարելավմանը»։ Տարավայր զբաղմունքնե-  
րի զարգացման խոչընդուռ։ «Գյուղացիների տղի-  
ւությունից և պրոգրեսիվորեն աճող հարկերով  
ընկճած լինելուց հետո գյուղացիական աշխա-  
տանքի և, հետեւաբար, գյուղացու բարեկեցության  
զարգացումը կասեցնող պատճառներից մեկը  
նրանց իրենց հասարակություններին ու հողա-  
բաժիններին ամրացնելն է։ Աշխատավոր ձեռքե-  
րը մի տեղի կազել և հողային համայնքը շղթա-  
յել անքակտելի կապերով—այդ արգեն ինքնին  
չափազանց աննպաստ պայման ե աշխատանքից  
անձնական հակածենության և հողային մանր  
սեփականության զարգացման համար» (284)։  
«Գյուղացիները՝ ամրակայլած իրենց հողարա-  
ժիններին և հասարակություններին, հնարավո-  
րությունից գուրիկ՝ իրենց աշխատանքն այնուեղ  
գործադրելու, վորտեղ այն ավելի աբտագրողա-  
կան ե և իրենց համար ավելի ձեռնտու, ասես  
բարացել են կենցաղի այն կծկված, հոտանման,  
անարտադրողական ձեի մեջ, վորով յելել են  
ձորտափրական իրավունքի ձեռքից» (285)։ Հե-  
ղինակը, հետեւաբար, գյուղացիական կենցաղի  
այդ հարցերին նայում ե զուտ բուրժուական  
տեսակետից, բայց, չնայած դրան (ավելի ճիշտ՝  
դրա չնորհիվ), նա չափազանց ճիշտ և գնահա-  
տում գյուղացիներին ամրացնելու վասր ամբողջ

հասարակական գարգացման և գյուղացիների իշրենց համար։ Այդ վեառն առանձնապես ուժով (կավելացնենք մենք) արտահայտվում է գյուղացիության ամենաստորին խմբերի, գյուղական պրոլետարիատի վրա։ Շատ դիպուկ և ասում Սկալզինը։ «Գերազանց և որենքի հոգացողությունն այն մասին, վոր գյուղացիները հողադուրի չմնան. բայց պետք չե մտունավ վոր գյուղացիներն իրենք անհամեմատ ավելի ուժեղ են հոգում նույն ըանի մասին, քան ինչ որենսդիր ասես» (286): «Բացի գյուղացիներին իրենց հողաբաժիններին և հասարակություններին ամբացնելը, նույնիսկ աշխատանքի համար ժամանակավոր բացակայումները նրանց համար կապված են բազմաթիվ նեղությունների և ծախսերի հետ, շնորհիվ համերաշխիքի և անցագրային սիստեմի» (298): «Բազմաթիվ գյուղացիների համար, իմ կարծիքով, յելք կրացվեր ներկայիս դժվարին կացությունից, յեթե... գյուղացիների համար հողից հրաժարվելու գյուղացներու միջոցներ՝ ձեռք առնվելին» (294): Այստեղ Սկալզինը հայտնում է մի ցանկություն, վորը խիստ հակասում է նարողնիկական նախագծերին, վորոնք շարունակ դրա հակառակին են հանգում ամբացվի համայնքը, անոտարելի լինեն հողաբաժինները և այլն։ Այն ժամանականից դեռ բազմաթիվ փաստեր ապացուցել են, վոր

Սկալզինը վովին իրավացի յեր. գյուղացիներին հողին ամբացնելու և գյուղացիական համայնքի դասային սահմանափակվածության պաշտպանությունը միմիայն վատթարացնում է գյուղական պրոլետարիատի գրությունը և կասեցնում է յերկրի տնտեսական զարգացումը, բնակ ի վհճակի շինելով «նստակյաց պրոլետարին» պաշտպանելու ծառայազրման ու կախյալության տվելի վատ տեսակներից, աշխատավարձի և կենսական մակարդակի ամենացած անկումից։

Ընթերցողը վերոհիշյալ քաղվածքներից արդեն կարող եք նկատել, վոր 'Սկալզինը համայնքի թշնամի յե։ Նա ծառանում և համայքի և վերաբաժանքների գերմանիական սեփականության, նախաձեռնության տեսակետից և այլն (եջ 142 և հետո.) համայնքի պաշտպաններին Սկալզինն առարկում է, թե «սովորույթի դարավոր իրավունքն» ապերել եր գարը. «Բոլոր յերկիրներում, քանի գյուղական բնակիչները մոտենում եյին քաղաքակրթված միջավայրին, նրանց սովորույթի իրավունքը կորցնում եր իր նախակենցաղ մաքրությունը, յենթարկվում եր փշանալու և աղավաղումների։ Մեզնում նույն յերնույթն և նկատվում։ Ընդհանուրի իշխանությունը քիչ քիչ փոխվում է աշխարհակերպի ու գյուղական գրագիրների իշխանության և փոխանակ գյուղացու անձնափորությունը

սղաշտպաննելու, նրա վզին ծանը լուծ և դառնում» (143) — շատ ճիշտ մի դիտողություն, վորն այս 30 տարիների ընթացքում՝ հաստատվել ե անթիվ-անհամար փաստերով։ Սկալդինի կարծիքով, պատմու թյունն անգարձ դատապարտել ե «նահապետական ընտանիքը», հողի համայնատիրությունը, սովորույթի իրավունքը»։ «Նրանք, ովքեր կցանկանացին մեզ համար առմիջտ պահպանել ապրած դարերի այդ հարգարժան հիշատակները, դրանով իսկ ապացուցում են, վոր իրենք ավելի ընդունակ են գաղափարով տարվելու, քան իրականությունը թափանցելու և պատմության անուանձահարելի ընթացքը հասկանալու» (162), և Սկալդինը այդ՝ փաստորեն ճիշտ՝ նկատումին ավելացնում ե — մանչեստըյան տաք ֆիլիպիներ։ «Հողի համայնատիրությունը», — ասում ե նա մի ուրիշ տեղ, — «յուրաքանչյուր գյուղացու սարկային կախման մեջ ե դնում ամբողջ հասարակությունից» (222)։ Այսպես, անպայման թշնամությունը դեպի համայնքը զուտ բուրժուական տեսակետից՝ Սկալդինի մոտ միանում ե գյուղացիների շահերի զուսպ պաշտպանության։ Սկալդինը համայնքի նկատմամբ տածած թշնամությանը բնավշի միացնում համայնքի բռնի վոչնչացման և բռնորեն մի ուրիշ նման հողատիրության սիստեմ մտցընելու այն հիմար նախագծերը, վոր սովորաբար

հնարում են համայնքի ժամանակակից հակառակորդները, վորոնք կողմանից են գյուղացիական կյանքին կոպտաբար միջամտելուն և համայնքին դեմ են արտահայտվում բնավշ վոչ գյուղացիների շահերի տեսակետից։ Սկալդինն, ընդհակառակը, ջերմադին բողոքում ե իրեն «հողի համայնական ոգտագործման բռնի վոչնչացման» կողմանիցների շարքը դասելու դեմ (144): «Փետրվարի 19-ի կանոնագրությունը», — ասում ենա, — «շատ իմաստուն կերպով գյուղացիներին իրենց և թողելու անցնելու համայնատիրությունից ընտանեակիրությունը: Իրոք, գյուղացիներից իրենցից զատ վոչ վոք չի կարող հիմնափորսապես լուծել այդպիսի անցման ժամանակի հարցը»։ Հետեաբար, Սկալդինը համայնքի հակառակորդ ե միայն այն իմաստով, վոր դժվարացնում ե անտեսական զարգացումը, հասարակությունից գյուղացիների դուրս գալը, հողից հրաժարվելը, այսինքն այն իմաստով, ինչով այժմ համայնքին թշնամի յեն ոռուսական աշակերտները». այդ թշնամությունն ընդհանուր վոչ մի բան չունի կալվածատերերի շահամնդիր շահերի պաշտպանության հետ, ճորտատիրական իրավունքների մասցրդների և վոգու պաշտպանության հետ, գյուղացիների կյանքին միջամտելու պաշտպանության հետ։ Շատ կարեոր և այդ տարբերությունը նկատի ունենալ, վորով-

հետեւ ժամանակակից նարովնիկները, վորոնք սովոր են համայնքի թշնամիներ տեսնել միմիայն «МОСКОВСКИЕ ВЕДОМОСТИ»-ի բանակում և այլն, մեծ հաճույքով ձեանում են, թե չեն հասկանում դեպի համայնքը ուրիշ թշնամություն։

Գյուղացիների թշվառ գրության պատճառուների մասին Սկալդինի ընդհանուր տեսակետը հանգում ե այն բանին, թե այդ պատճառները ձորտատիրական իրավունքի մնացորդների մեջ են, Նկարագրելով 1868 թվականի սովոր, Սկալդինը նկատում ե, վոր ձորտատերերը չարախնդությամբ նշում եյին այդ սովոր, նրա պատճառը տեսնելով գյուղացիների սանձարձակության մեջ, կալվածատերերի ինամակալությունը վերացնելու մեջ։ Սկալդինը յեռանդադին ծառանում ե այդ հայացքների դեմ։ «Գյուղացիների աղքատացման պատճառները, — ասում ենա, — նորտատիրական իրավունքից են ժառանգություն մնացել» (212), և վոչ թե նրա փրացման արդյունքն են։ այդ այն ընդհանուր պատճառներն են, վորոնք մեր գյուղացիների մեծամասնությունը պահում են պըռետարիատին մոտիկ մի աստիճանի վրա», և Սկալդինը կրկնում է վերը բերված կարծիքները ու քորմի մասին։ Անմիտ բան ե ընտանեկան բաժանքների վրա հարձակվելը։ «Յեթե բաժանքները գյուղացիներին յութական շահերին ժամանակավոր վսաս հասցնում

են ել, դրա վիսխարեն փրկում են նրանց անհատական աղատությունը և գյուղացիական ընտանիքի բարոյական արժանիքը, այսինքն մարդու այն բարձրագույն բարիքները, առանց վորոնց անհնարին են քաղաքացիականության վորեւ հաջողությունները» (217), և Սկալդինը իրավացիորեն նշում ե բաժանքների դեմ արշավելու իսկական պատճառները։ «Չատ կալվածատերերը շատ են չափազանցնում բաժանքներից առաջացող վսասը, և դրանց ինչպես և հարբեցողության վրա յեն գյուղացիական չքավորության այս կամ այն հետեւանքները վորոնց ճանաչումը կալվածատերերի համար այնպես անցանկալի յե» (218)։ Նրանց, ովքեր ասում են, թե այժմ գյուղացիական չքավորության մասին շատ են գրում, այնինչ առաջ չեյին գրում, նշանակում ե՝ գյուղացիների գրությունը վատթարացել ե, — Սկալդինը պատասխանում ե։ «Վորպեսպի գյուղացիների ներկա գրությունը նախկինի հետ համեմատելու միջոցով կարելի լինի դատել կալվածատերերի իշխանության տակից աղատվելու արդյունքների մասին, դրա համար պետք եր, դեռևս ճորտատիրական իրավունքի տիրապետման որով, գյուղացիական հողաբաժիններն այնպես շուրջըռը կտրտել, ինչպես հիմա յեն նրանք կտրտված, գյուղացիներին այն բոլոր պարտույթներով

հարկեր, վորոնք ազատազրումից հետո յեն յերե-  
վան յեկել, և հետո նայել, թե ինչպես կտանելին  
ճորտ գյուղացիներն արդպիսի զրությունը» (219):  
Այդ՝ Սկալդինի հայացքների վերին աստիճանի  
բնորոշ և կարևոր գիծն ե, վոր նա գյուղացիների  
զրության վատթարացման բոլոր պատճառները  
հանգեցնում ե ճորտատիրական իրավունքի մնա-  
ցորդներին, վորը ժառանգությունն ե թողել աշխա-  
տավճարումներ, բահրաներ, հողերի կտրտումներ,  
անհատական իրավաղրկությունն և գյուղացի-  
ների նստակեցությունն: Այն, վոր հենց նոր հա-  
սարակական-տնտեսական հարաբերությունների  
կարգում, հենց հետ-ոեփորմյան տնտեսության մեջ  
կարող են լինել գյուղացիության աղքատացման  
պատճառները,—այդ վոչ միայն չի աեսնում Սկալ-  
դինը, այլև նման մի միտք բացաձակորեն թույլ  
չի տալիս, խորապես հավատալով, վոր ճորտա-  
տիրական իրավունքի այդ բոլոր մնացորդների  
լիակատար վերացումով կզա ընդհանուր բարորու-  
թյունը: Նրա տեսակետը բացատական ե հենց, վե-  
սացը եք գյուղացիության աղատ զարգացման  
խոշնդոտները, վերացը եք ճորտատիրական իրա-  
վունքից ժառանգված կապահքները,—և աշ-  
խարհներից այս լավագույնի մեջ ամեն ինչ դեպի  
լավագույնը կերթա: «Պետական իշխանության  
կողմից»,—տսում ե Սկալդինը, —«այստեղ (այս-

ինքն զյուղացիության նկատմամբ) կարող ե  
միմիայն մեկ ուզի լինել՝ հետզհետե և անընդհատ  
վերացնել այն պատճառները, վորոնք մեր գյու-  
ղացուն հասցըել են ներկայիս նրա բթացմանն  
ու աղքատացմանը և նրան հնարավորություն չեն  
տալիս բարձրանալու և վոտի կանգնելու» (224,  
ընդգծում իմն ե): Այդ տեսակետից չափազանց  
բնորոշ ե Սկալդինի պատասխանը նրանց, ովքեր  
պաշտպանում են «համայնքը» (այսինքն զյուղացի-  
ներին հասարակություններին ու հողաբաժին-  
ներին ամբայնելը), նշելով, վոր այլապես «կազմ-  
վում ե գյուղական պլրութարիատը»: «Այդ ա-  
ռարկությունը»,—ասում ե Սկալդինը, —«ինքնին  
ընկնում ե, յերբ հիշենք, թե մեզնում հողի ինչ  
անծայրածիր տարածություններ դատարկ ընկած  
են, իրենց համար աշխատավոր ձեռքեր չգտնելով:  
Յեթե մեզնում որենքը չկաշկանդի աշխատավոր  
ուժերի բնական բաշխումը, ապա միուսաստանում  
պլրութարներ կարող են լինել իսկապես միմի-  
այն այն մարդիկ, վորոնք արհեստով աղքատ են,  
կամ անուղղելի արատավորներն ու հարբեցող-  
ները» (144)—XVIII դարի տնտեսագետների և  
«լուսավորիչների» տիպիկ մի տեսակետ, վորոնք  
հավատում եյլն, թե ճորտատիրական իրավուն-  
քի և նրա բոլոր մնացորդների վերացումը աշխար-  
հում ընդհանրական բարորության թագավորու-

թյուն և ստեղծում: — Նարոդնիկը, հավանական է, բարձրից կնայեր Սկալպինի վրա և կասեր, թե սա պարզապես բուրժուա յէ: — Եյո, ինարկե, Սկալպինը բուրժուա յէ, բայց նա պրոգրեսիվ բուրժուական իդեոլոգիայի ներկայացուցիչն է, վորի տեղը նարոդնիկի համար յերևան և գալիս մանրաբուրժուականը, վոր մի ամբողջ շարք կետերով սեակցիոն է: Իսկ զյուղացիների այն պրակտիկ և ռեալ շահերը, վորոնք համընկնում եյին և համընկնում են ամբողջ հասարակական զարգացման պահանջների հետ, այդ բուրժուան նարոդնիկից ել լավ եր կարողանում պաշտպանել \*:

Սկալպինի հայացքների բնութագիրն ավարտելու համար ավելացնենք, վոր նա դասայնության հակառակորդն է, բոլոր դասերի համար դպրաբանի միամնության պաշտպանն է, «թեո-

\* Յեվ ընդհակառակը, այն բոլոր պրոգրեսիվ պրակտիկ միջոցառութները, վոր մենք հանդիպում ենք նարոդնիկների մոտ, իրենց բովանդակությամբ լիովին բուրժուական են, այսինքն գնում են նենց կապիտալիստական, և վոչ մի այլ վորեն զարգացման ովտին: Միայն մանր բուրժուաներն են, վոր կարող եյին թերթիա հնարել թե իրը զյուղացիական հողատիրության ընդլայնումը, տուրքերի պակասեցումը, գողթի նվազումը, վարկը, տեխնիկայի վերելքը, վաճառահանման կարգավորումը և այլ միջոցառութներն ինչ-վոր «ժողովրդական արտադրության» են ծառայում:

րիայով» համակրում ե անդասային վոլոստին, ժողովրդականն, մանավանդ լնդհանուր լուսավորության յեւանդուն կողմնակիցն է, ինքնավարության և զեմստվային հաստատությունների կողմնակիցն է, հողային լայն, մանավանդ մանր վարկի կողմնակիցն է, վորովհետեւ հողի գնման ուժեղ պահանջ կա զյուղացիների կողմից: «Մանչեստրոցին» այստեղ ել ե յերևան: Սկալպինն, որինակ, ասում է, թե զեմստվային և քաղաքային բանկերը «բանկերի նահապետական կամ՝ նախակենցաղ ձևն» են, վորը աելլը զիջելու յե «բոլոր առավելություններն» ունեցող մասնավոր բանկերին (80): Հողի արժողությունն ավելացնելը «կարող և գլուխ գալ մեր պրովինցիաներում արդյունաբերական և առևտրական գործունեյությունը կենդանացնելով» (71) և այն:

Տանք հանրագումարները: Բատ հայացքների բնույթի Սկալպինին կարելի յե անվանել բուրժուալուսավորիչ: Նրա հայացքները չափազանց հիշեցնում են XVIII դարի անտեսագետների հայացքները (հասկանալի յե, նրանց համապատասխան ըեկալմով ուսուական պայմանների պրիզմայի մեջ), և նա բավականաչափ փայլուն ե արտահայտում 60-ական թվականների «ժառանգության» ընդհանուրը «լուսավորական» բնույթը: Ինչպես և արևմտայեվրոպական լուսավորիչները,

ինչպես և 60-ական թվականների զրականական ներկայացուցիչների մեծամասնությունը, Սկալդինը ջերմագին թշնամությամբ և համակված դեպի ճորտափրական իրավունքը և նրա բոլոր շառավիդները անտեսական, սոցիալական և իրավական բնագավառում: Այդ՝ «լուսավորչի» առաջին բնորոշ գիծն եւ Յերկրորդ բնորոշ գիծը, վորուսական բոլոր լուսավորիչների համար ընդհանուր եւ — լուսավորության, ինքնավարության, աղատության, կյանքի յերրուական ձեկի և առհասարակ Ռուսաստանի բազմակողմանի յերրուականացման յեռանդագին պաշտպանությունն եւ: Վերջապես, «լուսավորչի» յերրորդ բնորոշ գիծը ժողովրդական մասսաների, գլխավորապես գյուղացիների (վորոնք գեռևս լիովին աղատագրված չեյին կամ նոր միայն աղատագրվում եյին լուսավորիչների դարաշրջանում) շահերի ապաշտպանությունն եւ, անկեղծ հավատը, թե ճորտափրական իրավունքի և նրա մնացորդների վերացումն իր հետ ընդհանուր բարեկեցություն կը երի, և զրան ոժանդակելու անկեղծ ցանկությունը: Հենց այս յերեք գիծն ել այն բանի եյությունն են, ինչը մեզնում անվանում են «60-ական թվականների ժառագություն», և կարեւը և ընդդեմ, վոր այդ ժառանգության մեջ նաւրողիկան վոչինիկան վոչինչ չկա: Մուսատանում քիչ

զրողներ չկան, վորոնք իրենց հայացքներով մուաենում են հիշված գծերին և վորոնք նարողներության նետ յերբեք վորեւ ընդհանուր բան չեն ունեցելք Յերբ զրողի աշխարհայացքի մեջ առկա յեն հիշված գծերը, նրան միշտ և ամենքը համարում են «60-ական թվականների ավանդությունները պահպանած», բոլորովին անկախ այն բանից, թե նա ինչպես եւ վերաբերվում գեղի նարողնիկությունը: Վոչ վոքի մաքով, իհարկե, չի անցնի, վոր ասի, թե, որինակ, պէտք Սա Ստայութեվիչը վորի հոբելյանը վերջերս տոնվել ե, «հրամարվել եւ ժառանգությունից»՝ այն հիման վրա, վոր նա նարողնիկության հակառակորդն եր կամ անտարբեր եր վերաբերվում նարողնիկության առաջապես հարցերին: Մենք Սկալդինին\* որի-

\* Մեզ, թերեւս, առարկեն, թե Սկալդինը դեռի համայնքն իր թշնամությամբ և իր տոնով տիպիկ չե 60-ական թվականների համար: Բայց այստեղ բանը միայն համայնքը չե: Բանը բոլոր լուսավորիչներին ընդհանուր հայացքներն են, վորոնց Սկալդինն ել և հարում: Ինչ նրա տոնին եւ վերաբերում, ապա նա իսկապես, թերեւս, տիպիկ չե ըստ իր հանգիստ լըրջմառության, չափավորության, հետզհետեականության և այլն ենդեւու իզուր չե Սկալդինին liberal konserватiv (լիբերալ պահպանողական—Խմբ.) անվանել Սակայն ժառանգության՝ ավելի տիպիկ տոն ունեցող ներկայացուցիչ վերցնելը կը ներ, առաջին՝ անհար-

Նակ վերցրինք նրա համար, վոր, անտարակուսելիորեն «ժառանգության ներկայացուցիչը լինելով, նա միաժամանակ նաև հնության այն հաստատությունների անդայման թշնամին և, փորոնք նարողնիկությունն իր պաշտպանության տակ եր առել:

Մենք վերն ասացինք, թե Սկալդինը բուրժուատ յե: Այդ բնութաղըման ապացույցները ավականաչափ բերված են վերը, բայց անհրաժեշտ և վերապահություն անել վոր մեզնում հաճախ չափից դուրս սխալ նեղ, հակառակ մականորեն են հասկանում այդ խոսքը, հետև կապելով (առանց պատմական դարաշըջանների տարբերության) փոքրամասնության շահերի շահախնդրական պաշտպանությունը: Չի կարելի

մոր դանաղան պատճառներով, յերկրորդ՝ կարող եր թյուրիմացություն ծնել ժամանակակից նարողներկության հետ զուգահեռ անցկացնելիս: Հստ մեւ խնդրի բուն բնույթի, տներ (իբրև առածին հակադրություն) յիշածեսություն չի տալիս, և Սկալդինի վոչ-ափիկ տոնը առաջարկությունը, առաջել ևս արտադառառում ենրա «յերաժշտությունը», այսինքն նրա հայացքների բովանդակությունը: Իսկ մեղ հետաքրքրողն ել հենց այդ բովանդակությունն ե: Մենք ել միմիայն հայացքների բովանդակությամբ (բնավ վոչ գրողների տոնով) ենք մտադիր գուգահեռ անցկացնել ժամանակության ներկայացուցիչների և ժամանակակից դարաշըջանի նաբռողնիկների մեջև:

մոռանակ, վոր այն ժամանակ, յերբ գրում եյին XVIII դարի լուսավորիչները (վորոնց բուրժուաղիայի առաջնորդների շարքն է զասում լնդհանությունը ճանաչված կարծիքը), յերբ գրում եյին մեր լուսավորիչները 40-ական թվականներից մինչև 60-ական թվականները, հասարակական բոլոր հարցերը հանգում եյին ճորտատիրական իրավունքի և նրա մնացորդների գեմ մղած պայքարին: Հասարակական-անտեսական նոր հարաբերությունները և նրանց հակասություններն այն ժամանակ սաղմային վիճակում եյին: Ուստի և այն ժամանակ բուրժուաղիայի իդեոլոգների մեջ վոչ մի շահախնդրություն չեր գրսեորգում+ ընդհակառակը, թե Արևմուտքում և թե Ռուսաստանում նրանք լիովին անկեղծորեն հավատում եյին ընդհանուր բարորության և անկեղծորեն ցանկանում եյին այն, անկեղծորեն չեյին տեսնում (մասամբ գեռ չեյին կարող տեսնել) հակասություններ այն կարգի մեջ, վոր ճորտատիրականից եր աճում: Սկալդինն իր զրքի մի տեղում իդուր չի մեջբերում անում Աղամ Սմիթից. մենք տեսանք, վոր թե նրա հայացքները և թե նրա պատճառաբանության բնույթը շատ բանում կըրկնում են առաջավոր բուրժուաղիայի այդ մեծ իդեոլոգի թեղիները:

Յեվ ահա, յեթե մենք, մի կողմից, համա-

զբենք Սկալդինի պրակտիկ ցանկացումները ժամանակակից նարողնիկների հայացքների հետ, իսկ մյուս կողմից «ուռւական աշակերտների» վերաբերմունքի հետ գեղի այդ ցանկացումները, ապա կոտեսնենք, վոր «աշակերտները» միշտ կողմանկից կլինեն Սկալդինի ցանկացումները պաշտպանելուն, վորովհետև այդ ցանկացումներն արտահայտում են հասարակական պրոդրեսիվ դասակարգերի շահերը, տվյալ, այսինքն կապիտալիստական, ուղիով հասարակական ամբողջ զարդացման կենտական շահերը՝ իսկ այն, ինչ Սկալդինի այդ պրակտիկ ցանկացումների մեջ, կամ նրա հարցադրումների մեջ, փոփոխեցին նարողնիկները, — մինուս եւ և ժխտվում ե «աշակերտի» կողմից: Աշակերտները «վրա յեն ընկնումք վոչ թե «Ժառանգությանը» (այդ անհեթեթ սուտ է), այլ նարողնիկների կողմից ժառանգությանն արած ոռմանափի ու մանր-բուրժուական հավելումներին: Այդ հավելումներին եւ կանցնենք մենք այժմ:

## II

### «ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆԸ» ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ ԱՐԱԾ ՀԱՎԵԼՈՒՄԸ

Սկալդինից անցնենք Ենգելգարդուին: Նրա «Նամակներ զյուղից»-ը նույնպես դյուղի հրա-

պլարակախոսական ուրվագծեր են, այսպես վոր նրա գրքի թե՛ բովանդակությունը և թե՛ նույնիսկ ձեզ շատ նման են Սկալդինի գրքին: Ենդելդարդուն ավելի տաղանդավոր ե Սկալդինից, դյուղից գրված նրա նամակներն անհամեմատ ավելի կենդանի, պատկերավոր ենց նա չունի անվանում և մայրաքաղաքումք-ի լուրջ հեղինակի յերկար գատողությունները, բայց գրա փոխարեն նա ավելի շատ դիմուկ բնութագրեր և այլ ոպատկերներ ունի: Զարմանալի չե, վոր Ենգելգարդուի գիրքն ընթերցող հասարակության այնպիսի հաստատուն համակրանքն ե վայելում և գեռ մուսերքս վերաբատարակիցց նորից, այնինչ Սկալդինի գիրքը գրեթե բոլորովին մոռացված ե, թեպետև Ենդելգարդուի նամակները «Օтечеств. զանուառ»-ում սկսեցին տպագրվել Սկալդինի գրքի լույս տեսնելուց հետո ընդամենը յերկու տարի անց: Աւստի և վոչ մի հարկ չկա, վոր մենք ընթերցողին ծանոթացնենք Ենդելգարդուի գրքի բովանդակությանը, այլ մենք կտահմանափակիվինք միայն նրա հայացքների յերկու կողմի կարճառուս բնութագրուի նախ՝ ընդհանրապես «ժառանգությանը» հատուկ և մասնավորապես Ենդելգարդուին և Սկալդինին ընդհանուր հայացքների, յերկրորդ՝ սպեցիֆիկ նարողնիկական հայացքների, Ենդելգարդուն արդեն հա-

րադնիկ եւ, բայց նրա հայացքների մեջ բոլոր լուսավորիչներին ընդհանուռ այնքան շատ գծեր կան, այնքան շատ բան նրանից, ինչ ժամանակակիցն նարութիւնները դեն են շպրտել կամ վոփոխել—վոր դժվարանում են, թե վորտեղ նրան դասե՞՝ արդյոք «ժառանգության» ներկայացուցիչների շաբթը, առանց նարուդնիկական գունավորման, թե նարուդնիկների:

Առաջինների հետ Ենգելգարդախին մրտեցնում ե ամենից առաջ նրա հայացքների տչքի ընկնող զգաստությունը, իրականության պարզ ու շիտակ ընութագրումը, բոլոր բացասական հատկությունների, առհասարակ «հիմքերի» և մասնավորապես զյուղացիության անողոք մերկացումը,—այն իսկ «հիմքերի», վորոնց կեղծ իդեալացումը և գունավորումը նարուդնիկության անհրաժեշտ բաղադրիչ մասն եւ; Ենգելգարդախին նարուդնիկությունը, արտահայտված լինելով չափազանց թույլ ու յերկշու, այդ պատճառով ուղղակի և աղաղակող հակառածթյան մեջ ե զյուղի իրականության այն պատկերի հետ, վոր նա այնպես տաղանդավոր կերպով նկարեց, և յեթե մի վորեւ տնաեսապետ կամ հրապարակախոս զյուղի մասին իր դատողությունների հիմք ընդուներ Ենգելգարդախի բերած

Տվյալներն ու դիտողությունները\*, ապա այդ նյութից նարուդնիկական հետեւություններն անհնարին կլինելին: Գյուղացու և նրա համայնքի իդեալացումը նարուդնիկության անհրաժեշտ բաղադրիչ մասերից մեկն ե, և բոլոր յերանգների նարուդնիկները, միսած պ. Վ. Վ.-ից և վերջացըրած պ-ն Միմայլովսկիով, առատ տուրք են տվել «համայնքի» իդեալացման ու գունավորման այդ ձգուումին: Ենգելգարդախ այդպես գունավորելու հետքն անգամ չունի: Իրեն հակագրություն մեր գյուղացու համայնականության մասին շըղող ֆրազների, այդ «համայնականությունը» քաղաքների անհատականությանը, կապիտալիստական տնաեսության մեջ յեղած մրցակցությանը տարածուն հակագրելուն, Ենգելգարդախը մանր հողա-

\* Թուուցիկ նկատենք՝ այդ կլիներ վոչ միայն չտփառանց հետաքրքրական և ուսանելի, այլև տնտեսագետ-հետազոտողի լիովին որինական մի յեղանակ: Յեթե զիտնականները վստահանում են տնկետաների նյութին —շատ տնտեսատերերի պատասխաններին ու կարծիքներին, վոր մեծ մասամբ աչսուռ յեն, սակայ իրազեկ, ամբողջական հայացք չեն մշակել չեն չափումնել իրենց հայացքները,—ապա ինչու չփստահանանք այն զիտություններին, վոր 11 տարի շարունակ հավաքել և զարմանալի զիտողականության, անպայման անկեղծության տեր մի մարդ, վորը հիտնալի ուսումնասիրել ե այն, ինչի մասին իսոսում ե:

գործի ապշեցուցիչ ինդիվիդուալիզմը մերկաց-  
նում է լիակատար անողոքությամբ: Նա մանրա-  
մանորեն ցույց է տալիս, վոր մեր «գյուղացի-  
ները սեփականության վերաբերող հարցերում  
ամենածայրահեղ սեփականատերերն են» (եջ 62,  
մեջբ+ ըստ 1885 թ+ հրատ+), վոր նըանք տանել  
չեն կարողանում «ընդհանուր աշխատանքը», ա-  
տելով այն՝ նեղանձնական և յեսամոլ դրդա-  
պատճառներից+ ընդհանուր աշխատանքի ժամա-  
նակ յուրաքանչյուրը «վախենում է գերաշխա-  
տելուց» (եջ 206): Գերաշխատելու այդ յերկուողը  
համում է ծայրաստիճան կոմիզմի (թերևս նույն-  
իսկ տրագիկոմիզմի), յերբ հեղինակը պատմում  
է, թե ինչպես միենույն տանն ապրող և ընդ-  
հանուր տնտեսությամբ ու ազգակցությամբ կապ-  
ված կինարմատները յուրաքանչյուրն առանձին  
ե լվանում այն սեղանի իր մասը վորի վրա  
ճաշում են, կամ հերթով ե կթում կովերը, կաթ  
վերցնելով իր յերեխայի համար (վախենում են  
կաթը թագցնելուց) և յուրաքանչյուրն առան-  
ձին իր յերեխայի համար քաշովի պատրաստելով  
(եջ 323): Ենգելգարդուն տյնտես մանրամանո-  
րեն է պարզում այդ զծերը, դրանք հաստատում  
ե որինակների այնպիսի մասայով, վոր խոսք  
անգամ չի կարող լինել այդ փաստերի պատճա-  
կանության մասին: Ցերկուուից մեկը կամ Ենգել-

գարդաը բոլորովին անպետք և վստահություն  
չներշնչող մի դիտող ե, կամ մեր մուժիկի համայնա-  
կանության ու համայնական հատկությունների  
մասին յեղած ասեկուսները դատարկ սուտ են, վոր  
Տնտեսության վրա յե փոխազըռում հողատիրության  
ձևից վերացված գծերը (ընդումին հողատիրության  
այդ ձևից վերացված են նաև նրա բոլոր ֆիսկալ-  
ադմինիստրատիվ կողմերը): Ենգելգարդուր ցույց  
է տալիս, վոր մուժիկի տեսդենցն իր տնտեսա-  
կան գործունեյության մեջ՝ կուլակությունն ե.  
«կուլակության վորոշ չափ ունի յուրաքանչյուր  
գյուղացի» (եջ 491), «կուլակային իդեալները  
թագավորում են գյուղացիական միջավարում»...  
«Յես բազմիցս նշել եմ, վոր գյուղացիների մոտ  
շատ զարգացած ե ինդիվիդուալիզմը, յեսամուլու-  
թյունը, շահագործելու ձգտումը»... «Յուրաքան-  
չյուրը պարծենում է գայլաճուկ լինելովը և ձրգ-  
տում է ծածանին կուլ տալու»: Գյուղացիության  
տենդենցը վոչ յերբեք դեպի «համայնական»  
տնտեսաճել վոչ յերբեք դեպի «ժողովրդական»  
արտադրությունը», այլ դեպի ամենասովորական,  
կապիտալիստական բոլոր հասարակություններին  
հատուկ, մանր-բուրժուական կարգն ե—Ենգել-  
գարդուր ցույց է տվել գերազանցորեն: Ունեոր  
գյուղացու առետրական ուղերացիաների մեջ  
նետվելու (363), աշխատեցնելու պայմանով ցորեն

բաժմնելու, չքավոր մուժիկի աշխատանքը դնելու (Եջ 457, 492 և ուրբ) ձգտումները, այսինքն, տնտեսագիտական լեզվով ասած, տնտեսարք մուժիկների՝ գյուղական բուրժուազիայի փոխարկվելը Ենգելգարդուր նկարագրեց ու ապացուցեց անդարձ կերպով: «Յեթե գյուղացիները չանցնեն արտելային տնտեսության, — ասում ե Ենգելգարդուր, — և յուրաքանչյուր ծուխ առանձին տնտեսություն վարի, ապա հող շատ լինելու դեպքում ել հողագործ գյուղացիների միջն կլինեն թե հողագուրիներ և թե բատրակներ: Ավելին կասեմ, յենթադրում եմ, զոր գյուղացիների ստացվածքների միջն տարբերությունն ավելի զգալի կլինի, քան այժմ: Չնայած համայնական հողատիրությանը, «հարուստների» կողքին կլինեն փաստորեն հողագրկված շատ բատրակներ: Ինձ կամ իմ յերեխաներին ինչ, թե յես հողի իրավունք ունեմ, յերբ վոչ կապիտալ ունեմ, վոչ ել մշակման դրսիներ: Այդ նույնն ե, թե կույրին հող տան — կեր» (Եջ 370): «Արտելային տնտեսությունն» այսուղ մենակ կանդնած ե մի տեսակ տիսուր հեգնանքով, ինչպես բարի, անմեղ ցանկություն, վորը վոչ միայն չի բցիսում գյուղացիության մասին յեղած տվյալներից, այլ նույնիսկ ուղղակի հերքիւմ ու բացառվում ե այդ տվյալներով: Ենգելգարդումին առանց վորնե գունագորման

ժառանգության ներկայացուցիչների հետ մոտեցնող մի ուրիշ գիծն ել նրա հավատն ե, թե գյուղացիության թշվառ գըության գլխավոր ու հիմնական պատճառը ճորտափիրական իրավունքների մասցորդների և նրան հատուկ կանոնակարգի մեջ ե: Վերացընեք այդ մնացորդները և այդ կանոնակարգը — և բանը զլուխ կդա: Ենգելգարդուի անպայման բացասական վերաբերմունքը դեպի կանոնակարգը, նրա կծու ծաղըը կանոնակարգի միջոցով մուժիկին վերից բարերարելու ամեն մի փորձի հանդեպ — ամենասուր հակասության մեջ են «զեկավարող դասակարգերի բանականության ու խղճի, գիտության ու հայրենասիրության» նկատմամբ նարոգնիկական ակնկալությունների հետ (պ-ն Յուժակովի խոսքերը «Պ. 6-ՅՕ»-ի մեջ, 1896, №12; Եջ 106), «աբտադրության կազմակերպման» վերաբերյալ նարոգնիկական պրոֆեկտյորության հետ և այլն: Հիշեցնենք, թե Ենգելգարդում ինչպես ծաղրաբար եր հարձակվում այն կանոնի վրա, թե ջրաղացում չի կարելի ողի ծախել, կանոն, վորը նկատի ունի մուժիկի «ոգուտը» ինչ զայրույթով ենա խոսում միքանի գեմափոնների 1880 թ. պարտադիր՝ վորոշման մասին հաճարը ոգոստոսի 15-ից շուտ չցանելու վերաբերյալ, այդ՝ նույնպես շինականի ոգուտի նկատառություններից առաջացած՝ կարինետային «զետնականների» կո-

աղիտ միջնամասության մասին «միլիոնավոր հողագործ անտեսների» տնտեսության (424): Նշելով այնպիսի կանոնները ու կարգադրություններ, ինչպես՝ փշատերև անտառում ծխելը, գարնանը գայլաձուկ խփելը, «մայիսի» համար կեչի կտրելը բներ քանդելն արգելելը և այլն, Ենգելգարդարդը հեգնորեն նկատում երած ամուժիկի մասին հոգալը մշտական ինտելիգենտ մարդկանց զլիսավոր վիշտն երեղել: Ո՞վ եր համար ապրում: Ամենքը մուժիկի համար են ապրում», Մուժիկը հիմար ե, ինքն իրեն չի կարողանում սարքվել: Յեթե նրա մասին վոչ վոք չհոգա, նա բոլոր անտառները կվառի, բոլոր թռչուններին կկոտորի, ամբողջ ձուկը կփրսա, հողը կփշացնի, ինքն ել սալամաթ կմեռնի» (398): Առացեք, բնթերցող, կարմղ եր արդյոք այդ գրողը համակրել թեկուղ նարոգնիկների սիրած՝ հողաբաժինների անոտարելիության որենքին: Կարմղ եր արդյոք նա «Рус. Богатство»-ի սյուներից մեկի վերը քաղաքած ֆրաղին նմանող վորեե բան ասել: Կարմղ եր արդյոք նա նույն ժուրնալի մի ուրիշ սյան՝ պահանջման մեջ կարիշեվի տեսակետն ունենալ, վորը մեր նահանգական գեմստվոներին (90-ական թվականներին) հանդիմանություն ե կարգում, վոր նրանք «տեղ չեն գտնում» «հողադրժական աշ-

խատանք կազմակերպելու վրա սկսանմատիկ խուցոր, լուրջ ծախսերի համար»\*:

Նշենք ելի մի գիծ, վորն Ենգելաբդում մոտեցնում ե Սկալդինի հետ այդ՝ Ենգելգարդակի անգիտակից վերաբերմունքն եղեափի զուտ բուրժուական շատ ցանկություններ և միջոցառումներ: Վոչ թե Ենգելգարդուն աշխատում ե գունազարդել մանը բուրժուաներին, ինչ-վոր պատճառանքներ հնարել (ա լա պահանջմանը այս կամ այն ձեռնաբկուների նկատմամբ կիրառելու դեմ,—բնավ վոչ: Ենգելգարդու պարզապես, լինելով պրակտիկ-տնտեսատեր, հրապուրվում ե ամեն տեսակի պրոգրեսներով, բարելավումներով տնտեսության մեջ, բոլորովին չնկատելով, վոր այդ բարելավումների հասարակական ձեր տալիս ե մեղնում կալիտավագմի անհնարինության մասին նրա իսկ սեփական թերորիաների լավագույն հերքումը: Հիշեցնենք, որինակ, թե ինչպես նա տարվում ե այն հաջողություններով, վոր ինքն ունեցել եր իր տնտեսության մեջ շնորհիվ բանվորների գործափառձի սիստեմի (վուշը տրորելու համար, կալ-

\* «Русское богатство», 1896թ., № 5, մայիս: Պ. ն կարիշեվի հոդվածը տնտեսական միջոցառումների վրա նահանգական գեմստվոների արած ծախսերի մասին: Եջ 20:

սելու համար և այն): Ենգելգարդու կարծես չի ել կառկածում, վոր ժամանակավարձը հատա- վարձով փոխաբենելը զարգացող կապիտալիստա- կան տնտեսության ամենատարածված յեղանակ- ներից մեկն ե, վորով նա համառում ե աշխատան- քի ինտենսիվացումն ուժեղացնելուն և գերար- ժեքի նորման մեծացնելուն: Մի ուրիշ որինակ: Ենգելգարդու ծաղրում ե «Յեմլեծելյաչյան գազետ»-ի ծրագիրը՝ «Պաշտերը խմբական կա- պալի տալը դադարեցնելը, բարեկային տնտե- սություններ սարքելը, կատարելագործված մե- քենաներ, դործիքներ, անսառւնների ցեղեր, բազմագաշտյան սիստեմ մտցնելը, մարդագե- տինների և արտատավայրերի բարելավումը և այն և այն»:—«Բայց այս բոլորը միայն ընդհանուր ֆրազներ են»—բայց ականջում ե Են- գելգարդու (128): Յեզ սակայն հենց այդ ծրա- գիրն ե, վոր իբրադուեց Ենգելգարդուն իր տըն- տեսական պրակտիկայում, իր անտեսության մեջ տեխնիկական պրոգրեսի համար նենց նրա բարեկային կազմակերպման հիման վրա: Յեզ կամ մենք տեսանք, թե ինչպես Ենգելգարդուն անկեղծորեն և ճիշտ մերկացրեց անտեսառեր մուժիկի խակական տենդենցները: Բայց այդ նրան ընալ չխանգարեց պնդելու, թե «հարկավոր են վոչ թե ֆաբրիկաներ ու գործարաններ, այլ ոյտ-

ղական վորիկ (շեղութը Ենգելգարդուն ե) ա- րադ քաշելու տեղեր, ձիթահանքեր» և այն, այ- սինքն «հարկավոր ե», վոր ոյուղական բուրժու- ազիան անցնի զյուղատնտեսական տեխնիկական արտադրությունների, —մի անցում, վոր ամենատեղ և միշտ հողագործական կապիտալիզմի կարևո- րագույն նախանշաններից մեկն ե յեղել: Այս- տեղ այն ե արտահայտվել վոր Ենգելգարդուը վոչ թե թերետիկ եր, այլ պրակտիկ-անտեսա- տեր: Մի բան ե՝ դատել առանց կապիտալիզմի պրոցեսի հարավորության մասին, մի այլ բան՝ վոր ինքդ տնտեսավարես: Նպատակ ունենալով իր տնտեսությունը ուցինալ կերպով գնելու, Են- գելգարդուը շրջապատող հանգամանքների ուժով հարկադրված եր զրան համեմ զուտ կապիտա- լիստական յեղանակներով և մի կողմ թողնել իր թերետիկական և վերացական կասկածները «բատրակության» վերաբերյալ: Սկարինը թեո- րիայում դատում եր ինչպես տիպիկ մանչես- տըրը, բոլորովին չնկատելով վոչ իր դատողու- թյունների այդ բնույթը և վոչ նրանց համապա- տասխանությունը Ռուսաստանի կապիտալիստա- կան եվոլուցիայի կարիքներին: Ենգելգարդուը պրակտիկայում հարկադրված իր գործելու ինչ- պես տիպիկ մանչեստըրը, հակառակ եր թերե- տիկական բողոքին կապիտալիզմի դեմ և իր ցան-

կությանը՝ հավատալ, թե հայրենիքը հասուկ ուղիներ ունի:

Իսկ Ենգելգարդան ուներ այդ հավատը, վորը և մեզ հարկադրում ե նրան նարողնիկ անվանելու Ենգելգարդան արդեն պարզ տեսնում ե Ծուռաստանի տնտեսական զարգացման խևկական տեսդենցը և ավում ե խուսափիլ այդ զարգացման հակասություններից: Նա տքնում և ապացուցել հողագործական կապիտալիզմի անհնարինությունը Ծուռաստանում, ապացուցել, վոր «մենք կնեխտ չունենք» (եջ 556),—չնայած վոր հենց ինքն ամենամանրամասն կերպով հերքեց մեր բանվորների թանգության մասին յեղած ասեկուները, հենց ինքը ցույց տվեց, թե իր մոտ ինչ փողոքմելի գնով ե աշխատում անասնապահ Պյոտրն իր ընտանիքով, վորին ոռնկից դուրս տարեկան 6 ոռւբլի յե մնում «աղ, ձեթ, հագուստ գնելու համար» (եջ 10): «Ու ելի նրան նախանձում են, և բավական ե հենց նրան հեռացնեմ, իսկույն նրա տեղը բռնելու 50 ցանկացող կգանվի» (եջ 11): Նշելով իր տնտեսության հաջողությունը, այն, վոր բանվորները չնորհքով են վարգում գութանի հետ, Ենգելգարդարը հաղթականորեն բացականչում եւ «և հվեն հերկ անողները: Տգետ, անբարեխիղ ոռւս գյուղացիներ» (եջ 225):

Իր սեփական տնտեսավարությամբ և գյու-

ղացիական ինդիվիդուալիզմի իր մերկացումով հերքելով «համայնական» վերաբերյալ ամեն մի պատրանք, Ենգելգարդարը, սակայն, վոչ միայն «հավատում եր» գյուղացիների՝ արտելային տնտեսության անցնելուն, այլև «համոզմունք» եր հայտնում, թե այդ այդպես ել կլինի, թե հենց մենք, ոռւմներս, կլատարենք այդ մեծ գործը, տնտեսավարության նոր յեղանակներ կմտցնենք: «Հենց զրանումն և մեր տնտեսության ինքնագոյությունը, բնահատկությունը» (եջ 349): Ենգելգարդտուեալիստը փոխարկվում է Ենգելգարդտումանտիկի, վորն իր տնտեսության յեղանակների և գյուղացիների տնտեսության իր դիտած յեղանակների մեջ «ինքնագոյության» լիակատար բացակայությունը փոխհատուցում ե ապազա «ինքնագոյության» «հավատով»: Այդ հավատից արդեն շատ քիչ բան և մնում նաև մինչև ուլտրանարողնիկական գծերը վարոնք—թեկուզ և բոլորովին հատ-հատ—Ենգելգարդտի մոտ պատահում են, մինչև նեղ նացիոնալիզմը, վոր շովինիզմին և սահմանակցում («Յեվրոպան ել կես կանենք», «Յեվրոպայում ել մուժիկը մեր կողմը կլինի» (եջ 387)—ապացուցում եր Ենգելգարդտը մի կալվածատիբոյն՝ պատերազմի առթիվ), և նույնիսկ մինչև աշխատավճարումներն արդարացնելը: Այո, նույն Ենգելգարդտը, վորն իր գրքի այնքան

շատ սքանչելի եջեր նվիրել և գյուղացու ծեծկված ու ստորացած դըռւթյանը, վորը (գյուղացին: — Թաղմ.) պարտքով փող ու ցորեն և վերցրել աշխատելու պայմանով և հարկադրված և ահճճական կախման ամենավատթար պայմաններում գրեթե ձրիաբար աշխատել\* — այդ նույն ենդեւգարդաբ մինչև այն տեղը հասցրեց, վոր տառց, թե «լավ կլիներ, յեթե բժիշկը (խոսքը գյուղում բժիշկ լինելու ոգտի և պետք լինելու մասին եր՝ Վ. Ի.) իր անաեսությունն ունենար, այնպես, վոր շինականը կարողանար բժշկության փոխարենը աշխատավճարել» (Եջ 41): Մեկնաբանություններն ավելորդ են:

— Ընդհանուր առմամբ և ամբողջությամբ, համարելով ենդեւգարդակայացրի վերը բնութագրված դրական զծերը (այսինքն նրան և «ժառանգության» ներկայացուցիչներին՝ առանց վորեւ նարոդնիկական գունավորման՝ ընդհանուր) և բացասականները (այսինքն նարոդնիկականները), մենք պետք ե ընդունենք, վոր առաջիններին անպայման դերակշռում են «Գյուղից»-ի հե-

Հիշեք այն պատկերը, թե ինչպես ավագը (այսինքն կալվածատիրոջ կառավարիչը) գյուղացուն աշխատանքի յե կանչում, յերբ մուժիկի իր ցորենը կծոռութիւն և, և նրան գնալ հարկադրում և վոլոստում «վարտիքն իջեցնելու» հիշատակումը միայն,

դինակի մոտ, այնինչ վերջիններն ասես մի տեսակ կողմնակի, պատահական հավելված մինեն՝ դրսից բերված և գրքի հիմնական տոնին անհարիր:

### III

«ՃԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» ՇԱՀԵ<sup>8</sup> ԱՐԴՅՈՒՔ  
ՆԱՐՈՒՄԻԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՐ ՈՒՆԵՆԱԼՈՒՑ

— Իսկ դուք ի՞նչ եք հասկանում նարոդնիկություն ասելով, — կիաբցնի, յերևի, ընթերցողը: — Թե ինչ բովանդակություն է զրվում «ժառանգություն» հասկացողության մեջ, որա բնորոշումը տրված և վերը, իսկ «նարոդնիկություն» հասկացողությանը վոչ մի բնորոշում չի արված:

— Նարոդնիկություն ասելով մենք հասկանում ենք աշխարհայացքների մի սիստեմ, վորն իր մեջ հետեւյալ յերեք զծերն ե պարունակում: 1) Կապիտալիզմը նուսասանում անկում, ուեգին համարելը: Այստեղից՝ դարավոր հիմունքների՝ կապիտալիզմի կողմից «բեկվելը» «կասեցնելու», «կանգնեցնելու», «զադարեցնելու» ձրդումներն ու ցանկությունները և այլ ուեակցիոն վայնասուններ: 2) Ընդհանրապես ուսուկան և նեսեսակարգի յեզ մասնավորապես գյուղացու՝ իր համայնքով, արտելով յեզ այլն՝ ինքնա-

գոյաւրյան հանաչումը։ Թուսական տնտեսական հարաբերությունների նկատմամբ հարկավոր չեն համարում կիրառել ժամանակակից դիտության մշակած հասկացողությունները հասարակական տարբեր դասակարգերի և նրանց կոնֆլիկտների մասին։ Համայնական գյուղացիությունը դիտվում է ինչպես մի ինչ-զոր բարձրագույն, լավագույն բան կապիտալիզմի համամատությամբ։ առաջ ե գալիս «հիմունքների» իդեալացումը։ Գյուղացիության շրջանում ժխտվում և նույնանում են նույն հակասությունները, վորոնք հատուկ են ամեն մի սուբանքային և կապիտալիստական տնտեսության, ժխտվում ե այդ հակասությունների կազմ նրանց ավելի զարգացած ձեր հետ կապիտալիստական արդյունաբերության և կապիտալիստական հողագործության մեջ։ Յ) Յերկրի «ինտելիգենցիայի» յեվ իրավական-քաղաքական նաև նաև անտարյունների՝ հասարակական փորու դասակարգերի նյութական շահերի հետ կապ ունենալն անհենելը։ Այդ կապի ժխտումը, այդ սոցիալական կործոնների մատերիալիստական բացարության բացակայությունը հարկադրում է նրա մեջ տեսնելու մի ուժ, վորոն ընդունակ և «պատմությունն ուրիշ գծով քարշ տալու» (պ. Գ., Վ.), «ճամփից շեղելու» (պ. Ն—ոն, պ. Յուժուկով և այլն) և այլն։

Ահա թե «նարոգնիկություն» ասելով մենք ինչ ենք համականում։ Ըսթերցողն, ուրեմն, տեսնում ե, վոր մենք այդ տերմինը գործ ենք ածում բառի լայն իմաստով, ինչպես վործ են ածում նաև բոլոր «ուստական աշակերտները», վորոնք յելում են հայացքների ամբողջ սիստեմի դեմ, և վոչ թե նրա առանձին ներկայացուցիչների դեմ։ Այդ առանձին ներկայացուցիչների միջև, իհարկե, կան տարբերություններ, յերբեմն խոշոր տարբերություններ։ Այդ տարբերությունները վոր վոք չի անտեսում։ Բայց աշխարհայացքի բերված գծերն ընդհանուր են նարոգնիկության բոլոր ամենատարբեր ներկայացուցիչների համար, սկսած։ գե, թեկուզ ասենք, պ. Յուղովից և վերջացրած պ-ն Միխայլովսկիով։ Պ. պ. Յուղովները, Սագոնովները, Վ. Վ.-ները և այլն՝ իրենց հայացքների հիշված բացասական գծերին ավելացնում են ելի ուրիշ բացասական գծեր, վորոնք, որինակ, չկան վոչ պ. Միխայլովսկու, վոչ ել այժմյան «Рус. богоатство»-ի ուրիշ աշխատակիցների մոտ։ Ժխտել բառի նեղ իմաստով նարոգնիկների այդ տարբերությունները առնասարակ նարոգնիկներից, իհարկե, սխալ կլիներ, բայց ել ավելի սխալ կլիներ՝ անտեսել, վոր բոլոր և ամեն տեսակի նարոգնիկների սոցիալ-տքնատեսական հիմնական հայացքներն ըստ վերը

բերված գլխավոր կետերի համընկնում են: Իսկ վրապիհետև «ռուսական աշակերտները» ժխտում են հենց այդ հիմնական հայացքները, և վոչ թե միայն «ախուր թեքումները» նրանցից դեպի ավելի վատ կողմը, առաջ նրանք, ակներս ե, լիակատար իրավունք ունեն ճնարողնիկություն» հասկացողությունը՝ զործածելու բարի ընդարձակ նշանակությամբ: Վոչ միայն իրավունք ունեն, այլև չեն կարող այլ կերպ վարվել:

Անցնելով նարողնիկության վերն ուրվագծված հիմնական հայացքներին, մենք պետք եւ ամենից առաջ արձանագրենք, վոր «ժառանգությունն» այդ հայացքներում բոլորովին գործ չունի: «Ժառանգության» մի ամբողջ շարք անտարակուսելի ներկայացուցիչներ և պահողներ կան, վորոնք ընդհանուր վոչ մի բան չունեն նարողնիկության հետ, կապիտալիզմի հարցը ընալ ել չեն դնում, մուսաստանի, զյուղացիական համարնքի և այն՝ ինքնագոյաթյանն ամենէւին ել չեն հավատում, ինտելիգենցիայի և իրավական-քաղաքական հաստատությունների մեջ «ճամպից շեղելու» ընդունակ վոչ մի գործոն չեն տեսնում: Մենք վերն որինակի համար անվանեցինք «Вестник Европы»-ի հրատարակիչ-խմբագրին, վորին ի՞նչի համար ուզես, բայց ժառանգության տրամիցիաները խախտելու համար չի կարելի մեղա-

դրել: Ընդհակասակը, մարդիկ կան, վորոնք իրենց հայացքներով մոտենում են նարողնիկության հիշված հիմնական սկզբունքներին և ընդուն ափաշկաբա «հրաժարվում ժառանգությունից», — անվանենք հենց թեկուղ նույն պ-ն Յա+ Արբանովին, վորին պ+ Միխայլովսկին ել ե նշում, կամ պ+ Յուզովին: Այն նարողնիկությունը, վորի զեմ մարտնչում են «ռուսական աշակերտները», նույնիսկ ամենեւին ել չկար այն ժամանակ, յերբ (արտահայտվենք իրավագետի լեզվով) ժառանգությունն եր («գտնվում»), այսինքն 60-ական թվականներին: Նարողնիկության սաղմերը, սկզբուավորություններն, ինարկե, կային վոչ միայն 60-ական թվականներին, այլև 40-ականներին և նույնիսկ զեռ ավելի վաղ, — բայց նարողնիկության պատմությունը մեզ ընալ չի հետաքըրքըրում այժմ: Հարկադրու ե, ելի կրկնում եմ, վոր սահմաններ, թե «ժառանգությունը» 60-ական թվականներին այն իմաստով, ինչ մենք վերն ուրվագծեցինք, ընդհանուր վոչ մի բան չունի նարողնիկության հետ, այսինքն ըստ հայացքների եյության նրանց միջև ընդհանուր բան չկա, նրանք զանազան հարցեր են դնում: Կան «ժառանգության» վոչ-նարողնիկ պահողներ, և կան նարողնիկներ, վորոնք «հրաժարվել են ժառանգությունից»: Հասկանալի յե, նարողնիկներ ել կան, վո-

բոնք պահում են «Ժառանգությունը» կամ հավակնություն ունեն նրա պահողը լինելու։ Դրա համար ել հենց մենք խոսում ենք ժառանգության կապի մասին նարոդնիկության հետ։ Արդ, տեսնենք, թե այդ կապն ինչ ավեց։

Նախ՝ նարոդնիկությունը ժառանգության հանդեպ խոշոր խայլ ե արել դեպի առաջ, հասարակական մտքի տուծն լուծման դնելով այնպիսի հարցեր, վոր ժառանգության պահողները մասսամբ դեռ չելին կարող (իրենց ժամանակին) դնել մասամբ ել չելին դնում և չեն դնում իրենց մտահորիզումի հատուկ նեղության պատճառով։ Այդ հարցերի դրամը նարոդնիկության պատմական խոշոր ծառայությունն ե, և լիովին ընական ու հառկանալի յե, վոր նարոդնիկությունը (ինչ տեսակի ել վոր լինի) լուծում տալով այդ հարցերին, դրանով իսկ առաջավոր տեղ գրավեց ուստական հասարակական մտքի պրոգրեսիվ հոսանքների շարքում։

Բայց այդ հարցերին նարոդնիկության աված լուծումը դուքս յեկավ բոլորովին անպետք՝ հիմնված Արևմտա Յեվրոպայի կողմից վաղուց արդեն դեն շպրաված հետամնաց թերիաների վրա, հիմնված կապիտալիզմի ոռմանտիկական և մանր-բուրժուական քննադատության վրա, ոռապ պատմության և իրականության խոշորա-

գույն փաստերն անտեսելու վրա։ Քանի դեռ մուսաստանում կապիտալիզմի և նրան հատուկ հակասությունների զարգացումը շատ թույլ եր, կապիտալիզմի այդ պրիմիտիվ քննադատությունը կարող եր տեղ գտներ։ Իսկ կապիտալիզմի ժամանակակից զարգացմանը մուսաստանում, ոռուսական տնտեսական պատմության և իրականության մասին մեր գիտելիքների ժամանակակից դրությանը, սոցիոլոգիայից արվող ժամանակակից պահանջներին նարոդնիկությունն անպայման չի բավարարում։ Իր ժամանակին վնելով պրոգրեսիվ մի յերեսույթ, ինչպես կապիտալիզմի մասին հարցին առաջին դրումը, նարոդնիկությունն այժմ ռեակցիոն և վնասակար թերիա յե, վորը շփոթեցնում ե հասարակական միտքը, վորը անշարժության և ամեն տեսակի ասիականության ոգտին ե գործում։ Կապիտալիզմի նարոդնիկական քննադատության ռեակցիոն բնույթը նարոդնիկությանը ներկայում նույնիսկ այնպիսի գծեր և տվել վորոնք նրան ավելի ցած են դնում այն աշխարհայեցողությունից, վորը ժառանգության հավատարիմ պահպանումով ե սահմանափակվում։ Վոր

\* Յես արդեն գեղաք ունեցել եմ վերը տնտեսական ոռմանտիզմի մասին հողվածում նկատելու, վոր մեր հակառակորդներն ապշեցուցիչ կարճատեսառություն են

այդ այդպես ե,—կաշի ատենք ցուց տալ իսկույն նարողնիկան աշխարհայեցողության վերը նըշ-ված յերեք հիմնական գծերից յուրաքանչյուրի վերլուծումով:

Առաջին զիծը կապիտալիզմը Բուսաստանում անկում, ոեզրես համարելն եւ չենց վոր դրվեց կապիտալիզմի հարցը Բուսաստանում, շատ շուտով պարզվեց, վոր մեր անտեսական զարգացումը կապիտալիստական ե, և նարողնիկներն այդ զարգումը հայտարարեցին ոեզրես, սխալ, շեղում այն ճանապարհից, վոր իրեկ թե պատմական ամբողջ կյանքն ե պատվիրում ազգին, այն ճանապարհից, վորն իրեկ թե որբագրծված և զարտվոր հիմունքներով և այն և այն: Փոխանակ վոր լուսափորիչները ջերմագին հավատային հասարակական տվյալ զարգացմանը, անվտահություն առաջ յեկավ դեպի նա, պատմական լավատեսության և փոդու արիության փոխարեն՝ հոսեանություն և վնատություն, վորոնք հիմնաված ելին այն բանի վրա, թե՝ ինչքան ավելի այնպես զնան գործերը, ինչպես հիմա յեն գնում,

ցուցաբերում, ոեակցիոն, մանր բուրժուական տերմինները հասկանալով իրեկ բանագեծի արտառոց վարմունքներ, այնինչ այդ արտահայտությունները պատմափելսուփական բոլորին վորոշ իմաստ ունեն: (Տե՛րէլիք հ, Ա, Յ-ը հրատ., 1930, եջ 76, Խմբ.):

այնքան ավելի վաս, այնքան ավելի դժվար կիմնի լուծել նոր զարգացման առաջ քաշած խընդիրները առաջ են գալիս այդ զարգացումը «կասեցնելու» և «կանգնեցնելու» հրավերներ, առաջ ե գալիս թերթիա, թե այդ հետամնացությունը Բուսաստանի յերջանկությունն եւ և այն: Նարողնիկան աշխարհայեցողության այդ բոլոր յերեք գծերը «ժառանգության» հետ վոչ միայն վոչ մի ընդհանուր բան չունեն, այլ ուղղակի հակասում են նրան: Բուսական կապիտալիզմը «ճանապարհից շեղում», անկում և այն ընդունելը տանում ե դեպի Բուսաստանի ամբողջ անտեսական եվոլուցիայի խեղաթյուրում, այն «հերթափոխության» խեղաթյուրում, վոր մեր աչքերի տաջի և կատարիլում: Տարված զարավոր հիմունքների կապիտալիզմի կողմից բեկվելը կասեցնելու և զարգացնելու ցանկությամբ, նարոդիկնիկն ընկնում ե պատմական ապշեցուցիչ անտակության մեջ, մոռանում ե, վոր այդ կապիտալիզմի հետեւը վոչինչ չկա, բացի նույն պիսի շահագործումը՝ միացած ճորտագրման ու աշխատավորի զրությունը ծանրացրած անձնական կախման անվերջ ձեերի հետ, վոչինչ՝ բացի ուռախինայից և անշարժությունից հասարակական արտադրության մեջ, և, հետևաբար, սոցիալական կյանքի բոլոր վոլորտներում: Իր ոռմանափեկան մանր-բուրժուական տեսակետով կավելով

կապիտալիզմի դեմ, նարոդնիկը դեն և շպրտում  
պատճական ամեն մի ռեալիզմ, կապիտալիզմի  
իրականությունը միշտ համազրելով մինչկապիտա-  
լիստական կարգերի ներյուրանի հետ: 60-ական  
թվականների «Ժառանգությունը» հասարակական  
տվյալ զարգացման պրոցեսիվության իրենց ջերմ  
հավատով, ամբողջովին և բացառապես հնության  
մնացորդների դեմ ուղղված իրենց աշխանաթշնամու-  
թյամբ, իրենց համոզմունքով, թե հերիք և միայն  
մաքուր ավես այդ մնացորդները, և գործերը լա-  
վից ել լավ կդնան, — այդ «Ժառանգությունը» վոչ  
միայն գործ չունինարողնիկության տվյալ հայացք-  
ներում, այլ ուղղակի հակասում և նրանց:

Նարոդնիկության յերկրորդ գիծը Ռուսաստա-  
նի ինքնագոյությանը հավատալն եւ, դյուղացու,  
համայնքի իդեալացումը, և այն: Ռուսաստանի  
ինքնագոյության մասին ուսմունքը նարոդնիկ-  
ներին հարկադրեց արևմտա-յելլոպական հնացած  
թերիաներից բռներ նրանց զբում եր ապշե-  
ցուցիչ թեթևամտությամբ վերաբերվել անմտա-  
յելլոպական կուլտուրայի շատ նվաճումներին.  
Նարոդնիկներն իրենց այն բանով եյին հանդըս-  
տացնում, վոր յեթե մենք չունենք քաղաքա-  
կրթված մարդկության այս կամ այն գծերը,  
ապա դըա փոխարեն՝ «մեզ վիճակված եւ աշ-  
խարհին, տնտեսավարման նոր յեղանակներ ցույց

տալ և այն: Կապիտալիզմի և նրա բոլոր աբտա-  
հայտությունների այն վերլուծությունը, վոր  
տվեց արևմտա-յելլոպական առաջավոր միտքը,  
վոչ միայն չեր ընդունվում սուրբ Ռուսիայի վերա-  
բերմամբ, այլ, ընդհակառակը, բոլոր ջանքերն  
ուղղված եյին այն բանին, վորպեսզի այնպիսի  
պատրվակներ հնարվեն, վորոնք թույլ տալին  
ուստական կապիտալիզմի մասին չանել այն հե-  
տեւությունները, ինչ արված են յելլոպականի  
նկատմամբ: Նարոդնիկներն ակնածանքով խոնարհ-  
վում եյին այդ վերլուծման հեղինակների առջե-  
և... և շարունակում եյին ամենահանգիստ կեր-  
պով մնալ նույնական ուսմանտիկներ, վորոնց դեմ  
ամբողջ կյանքում կովում եյին այդ հեղինակ-  
ները: Բոլոր նարոդնիկներին ընդհանուր այդ  
ուսմունքը Ռուսաստանի ինքնագոյության մասին՝  
այնուամենայնիվ վոչ միայն վոչ մի ընդհանուր  
բան չունի «Ժառանգության» հետ, այլ նույնիսկ  
ուղղակի հակասում ենրան: «60-ական թվական-  
ներն», ընդհակառակը, ձգտում եյին յելլոպա-  
կանացնելու Ռուսաստանը, հավատում եյին Ռու-  
սաստանը համայնքութական կուլտուրային հա-  
ղորդակից գարձնելուն, հոգ եյին տանում այդ  
կուլտուրայի հաստատությունները մեր, բնավ  
վոչ ինքնագո, հողի վրա ևս փոխազրելու մասին:  
Ռուսաստանի ինքնագոյության մասին ամեն մի

ուսմունք լիակատար անհամապատասխանության  
մեջ և 60-ական թվականների վոգու և նրանց  
արագիցիաների հետ։ Այդ տրագիցիային ել ավե-  
լի համապատասխանում գյուղի նարողնիկա-  
կան իգեալացումը, գունազարդումը։ Այդ կեղծ  
իդեալացումը, վոր ցանկանում եր, ինչ ել վոր  
լինի, մեր գյուղում մի առանձնահատուկ բան  
տեսներ, վոր բոլորովին նման չե մինչկամիտա-  
լիստական հարաբերությունների շրջանում վորեն  
ուրիշ յերկրում վորեն ուրիշ գյուղում յեղած  
կարգին, — ամենատաղաղակող հակասության մեջ և  
զգացու ու ուսալիստական ժառանգության տրա-  
գիցիաների հետ։ Վորքան ավելի հեռու և ավելի  
խորն եր զարդանում կապիտալիզմը, վորքան գյու-  
ղում ավելի ուժեղ ելին արտահայտում այն հակա-  
սությունները, վոր ընդհանուր են ապրանքակապի-  
տալիստական ամեն մի հաստրակության, այնքան  
ավելի ու ավելի սուր եր յերեան գալիս հակադրու-  
թյունը մի կողմից գյուղացու «համայնականու-  
թյան», «արտելայնության» և այլնի մասին նարոդ-  
նիկների քաղցր-մեղցր տակոսեների և մյուս կող-  
մից գյուղացիության՝ փաստորեն գյուղական բուր  
ժուազիայի և գյուղական պրոլետարիատի յերկ-  
ճեղքելու միջեւ այնքան ավելի արագ նարողնիկ-  
ները վոր իրերին շարունակում եյին նայել գյու-  
ղացու աչքերով, սանտիմենտալ ուսմանտիկներից

մանր բուրժուազիայի իգեոլոգների եյին փոխարկ-  
վում, վորովինետև մանր արտադրողը ժամանակա-  
կից հասարակության մեջ ապրանքարտադրողի  
թե փոխարկվում։ Գյուղի կեղծ իդեալացումը և  
«համայնականության» մասին ուսմանտիկական  
ցնորդները տաճում եյին դեպի այն, վոր նարոդ-  
նիկները ծայրահեղ թեթևամտությամբ եյին վե-  
րաբերվում գյուղացիության այն իրական կա-  
րիքներին, վորոնք ավյալ տնտեսական զարգացու-  
մից են բղիստում Թեորիայում կարելի յեր, ինչ-  
քան ուզես, խոսել հիմունքների ուժի մասին,  
բայց պրակտիկայում յուրաքանչյուր նարոդնիկ  
հիմնալի գգում եր, վոր հնության մնացորդների,  
դեռ մինչեւ այժմ ել գյուղացիությունը վոտից-  
դլուխ ցանցող մինչև ֆորմյան կարգի մնացորդ-  
ների վերացումը հենց կապիտալիստական, և  
վոչ թե մի ուրիշ զարգացման ձմենապարհը կրա-  
նա։ Ավելի լավ ե անշարժություն, քան կապի-  
տալիստական պրոցես—այս ե, ըստ եյության,  
յուրաքանչյուր նարոդնիկի տեսակետը գյուղի  
վերաբերմամբ, թեև, հասկանալի յե, ամեն մի  
նարոդնիկ ել պ. վ. վ. նախվ ուղղագծությամբ  
չի սիրտ անի բայց աշկարա արտահայտել այդ։  
«Գյուղացիները, վորոնք մեխած են հողարաժին-  
ներին և հասարակություններին, զրկված են  
իրենց աշխատանքն այստեղ գործադրելու հնա-

բավորությունից, վորաեղ այն ավելի արտադրու-  
դական և իրենց համար ավելի ձեռնուու յե լի-  
նում, առես քարացել են կենցաղի այն միախմբը-  
ված, հուանման, անարտադրողական ձեկ մեջ,  
վորի մեջ իրենք յելել են ճորտատիրական իրա-  
վունքի ձեռքերից։ Այսպես եր նայում «ժառան-  
գության» ներկայացուցիչներից մեկը «լուսավոր-  
չի» իր բնորոշ տեսակետից։ — «Ավելի լավ ե՝  
թող գյուղացիները շարունակեն քարանալ կեն-  
ցաղի իրենց ուռատինային, նահապետական ձեկ  
մեջ, քան կապիտալիզմի համար ճանապարհ բա-  
նալ գյուղում»—այսպես ե նայում, ըստ եյու-  
թյան, յուրաքանչյուր նարողնիկ իրոք, հավա-  
նական ե, վոր վոչ մի նարողնիկ չգտնվի, վորը  
սիրտ անի ժխտելու, թե գյուղացիական համայն-  
քի դասային սահմանափակությունը նրա համե-  
րաշխիքով և նողի վաճառքն ու հողաբաժնից հրա-  
ժարվելով արգելելով ամենասուր հակասության  
մեջ ե ժամանակակից տնտեսական իրականու-  
թյան հետ, ժամանակակից ապրանքակապիտա-  
վաստական հարաբերությունների և նրանց զար-  
գացման հետ։ Անհնարին ժխտել այդ հակասու-  
թյունը, բայց վողջ եյությունն այն ե, վոր նա-  
րողնիկները հարցի այդպիսի գրումից, գյուղա-  
ցիության իրավական միջավայրը տնտեսական  
իրականության հետ, տնտեսական տվյալ զարգաց-

ման հետ այդպես համագրելուց վախենում են, վո՞ց  
վոր կրակից։ Նարողնիկը համառորեն ցանկանում  
է հավատալ գոյություն չունեցող և իր իսկ ոռ-  
մանտիկորեն յերկակայածին զարգացմանը՝ առանց  
կապիտալիզմի, ուստի և... ուստի նա պատրաստ ե  
կասեցնելու տվյալ զարգացումը, վորը կապիտա-  
վատական ուղիով ե ընթանում։ Գյուղացիական  
համայնքի դասային ինքնամփոփության, համե-  
րաշխիքի, գյուղացիների՝ հողը վաճառելու և հո-  
գաբաժնից հրաժարվելու իրավունքի հարցերին  
նարողնիկը մոտենում ե վոչ միայն մեծագույն  
զգուշացիությամբ և յերկյուղով «հիմունքների»  
(ոռութինայի և անշարժության հիմունքների) վի-  
ճակի մասին։ այդ քիչ ե, նարողնիկը նույնիսկ  
այն ասափճան ցած ե զլորվում, վոր վողջունում  
ե գյուղացիների՝ հողի վաճառքի վոստիկանական  
արգելքը։ «Մուժիկը հիմար ե», — կարելի յե-  
այլալիսի նարողնիկին ասել են գելզարդովի բառե-  
րով, — «ինքն իրեն չի կարողանում սարքից Յե-  
թե նրա մասին վոչ վոք չնողա, նա բոլոր անտառ-  
ները կվառի, բոլոր թոշուններին կկոտորի, ամբողջ  
ձուկը կվորսա, հողը կիշացնի և ինքն ել վողջ առողջ  
կմեռնի»։ Նարողնիկն այստեղ արդեն ուղակի  
«հրաժարվում ե ժառանգությունից», զառնալով  
ուեակցիոներ։ Նկատեք ընդունին, վոր գյուղացիա-  
կան համայնքի դասային ինքնամփոփության այդ

քանդումը, տնտեսական գարդացման չափով, ա-  
վելի ու ավելի ստիպողական անհրաժեշտությունն և  
գառնում գյուղական սլրութեարիատի համար, այն-  
ինչ գուղացիական բուրժուազիայի համար այսուե-  
ղից առաջյեկող անհարմարությունները բնավ այն-  
քան աչքի ընկնող չեն: «Տնտեսարար շինականը  
հեշտությամբ կարող ե կողմանակի հող վարձակալել,  
ձեռնարկությունը մի ուրիշ գյուղում բանալ, ա-  
ռեարական գործերով՝ ուր ուզում ե՝ զնալ ու-  
զած ժամանակով: Բայց գլխավորապես իր աշ-  
խատանքային ուժի վաճառքով ապրող «գյուղա-  
ցու» համար հողաբաժնին և հասարակությանն  
ամրացվելը նշանակում ենրա տնտեսական գոր-  
ծունեյության ահազին նշանակում, նշանակում և  
ավելի շահավետ վարձող գտնելու անհնարինու-  
թյուն, նշանակում եիր աշխատանքային ուժը հենց  
նրա տեղական գնորդներին վաճառելու անհրաժեշ-  
տություն, վարոնք միշտ ավելի եժան են վճարում  
և ճարտագրելու ամեն տեսակի յեղանակներ են  
ընտրում: —Մեկ վոր յենթարկվել եր ոռմանտիկա-  
կան ցնորդների, իրեն նպատակ եր զրել տնտեսական  
գարգացմանը հակառակ պահել ու պահպանել հի-  
մունքները, նարոդնիկն իր իսկ համար անհկատելի-  
որեն՝ այդ թեք մակարդակով ցած գլորվեց, մինչև  
վոր հասավ ագրարայինի կողքը, վորն ամբողջ  
հոգով ծարավի յե պահպանելու և ամբապնդելու

«գյուղացու կապը հողի հետ»: Արժե հիշել թե-  
կուղ այն, թե ինչպես գյուղացիական համայնքի  
այդ դասաշրջն ինքնամփոփությունը բանվորների  
վարձման հասուել յեղանակներ ստեղծեց՝ գործա-  
րանների և տնտեսությունների տերերի կողմից  
իրենց գործակաարներին գյուղեցյուզ, մանա-  
վանդ ասլառք ունեցող գյուղերն ուղարկելը՝ բան-  
գորներ վորքան կարելի յե ձեռնուու վարձելու:  
Բարեբախտաբար, հողագործական կապիտալիզմի  
գարգացումը, ավելելավ սլրուետարի «նստակեցու-  
թյունը» (այդպես ե այսպես կոչված հողագոր-  
ծական տարավայը զբաղմունքների գործողու-  
թյունը), այդ ճորտագրման տեղը հետզինեակ  
ազատ վարձումն ե զնում:

Ժամանակակից նարոդնիկական թեորիաների  
վասի մասին մեք դրույթի մի ուրիշ, թերես վոչ  
պակաս ուկցեֆ հաստատությունը տալիս ե այն  
փաստը, վոր նարոդնիկների շրջանում սովորական  
յերեւյթ ե աշխատավիճակներն իդեալացնելը:  
Մենք վերն որինակ բերինք այն բանի, թե ինչ-  
պես ենդելգարդաց, իր նարոդնիկական մեղանչումը  
կատարելով, այնքան գրեց, մինչև վոր գրեց, թե  
«լավ կլիներ» գյուղում աշխատավճարքներ զար-  
գացվեյին: Նույնը մենք գտնում եյինք հողագոր-  
ծական գիմնազիաների մասին պ. Յուժակովի հըու-  
չակապոր նախագծի մեջ («Русское богатство»

1895 № 5)\*: Տնտեսագիտական լուրջ հողվածներում նույնպիսի իդեալացումով եր տարբում են՝ զելգարդտի աշխատակիցն ըստ ժուրնալի, պէ Վ. Վ. վորը պնդում եր, թե գյուղացին հաղթանակ տարակ կալվածատիրոջ դեմ, վորն իբրև թե ուզում եր կապիտալիզմ մացնելոց բայց դժբախտությունն այն եր, վոր գյուղացին հանձն եր առնում մշակել կալվածատիրոջ հողը, զբա փոխարեն հողը նրանից «կապալով» ստանալով, -այսինքն տնտեսության բոլորովին նույն յեղանակն եր վերականգնում, ինչ ճորտատիրական իրավունքի որով ել կար: Արանք դեպի մեր հողագործության հարցերը նարոդնիկների ուսակցիոն վերաբերմունքի ամենասուր որինակներն են: Այդ գաղափարն ավելի քիչ սրությամբ դուք կհանդիպեք յուրաքանչյուր նարոդնիկի մոտ: Յուրաքանչյուր նարոդնիկ խոսում ե կապիտալիզմի վնասի և ոգուտի մասին մեր հողագործության մեջ, վորովհետեւ կապիտալիզմը, հաճեցեք տեսներ, ինքնուրույն գյուղացուն բատրակով ե փոխարինում: Կապիտալիզմի իրականությունը («բատրակը») հակազրվում է «ինքնուրույն» գյուղացու մասին հերյուրանքին. այդ հերյուրանքն այն բանի վրայե հիմնվում, թե

\* Տես «Նաբողնիկական պրոֆեկտության գոհարները» հոդվածը Եկրկերի II համար, Յորդ հրատ., 1930թ., էջ 277, Խմբ.:

մինչ կտպիտալիստական դարաշրջանի գյուղացին արտադրության միջոցների աեր ե, ընդգործում համեստությամբ լուսության և մատնվում այն, վոր արտադրության այդ միջոցների համար պետք ե վճարել նրանց աբժեքի կրկնապատիկը. թե արտադրության այդ միջոցներն աշխատավճարքների համար են ծառայում: Թե այդ «ինքնուրույն» գյուղացու կենսական մակարդակն այնքան ցած ե, վոր կապիտալիստական ուղածդյ յերկրում նրան պառապերների շարքը կդասելին: Թե այդ «ինքնուրույն» գյուղացու անլուսաշող չքավորությանն ու իներթությանը ավելանում ե անձնական կախումը ևս, վոր անխուսափելիորեն ուղեկցում ե տնտեսական մինչկապիտալիստական ձեւերին:

Նարոդնիկության յերրորդ բնորոշ գիծը — հասարակական վորոշ դասակարգերի նյութական շահերի հետ «ինտելիգենցիայի» և յերկրի իրավաքաղաքական հաստատությունների ունեցած կապի անտեսումը — ամենաանքակտելի կապ ունի նախընթացի հետ: Սոցիոլոգիական հարցերում ուսմիզմի այդ բացակայությունն ե միայն, վոր կարող եր ստեղծել ուսական կապիտալիզմի «սխալականության» և «ձանալարհից շեղելու» հնարավորության ուսմունքը: Նարոդնիկության այդ հայացքը նույնպես վոչ մի կապ չունի «ժառան-

գության» և 60. ական թվականների տրադիցիա-ների հետ, այլ, ընդհակառակը, ուղղակի հակա-սում ե այդ տրադիցիաներին: Այդ հայացքից բնականաբար բղպում ե գեպի ուռական կյան-քում մինչուժքորմյան կանոնակարգի բազմաթիվ մնացորդները նարողնիկների այնպիսի վերաբեր-մունք, վոր վոչ մի դեպքում չեյին կարող ունե-նալ «ժառանգության» ներկայացուցիչները: Այդ վերաբերմունքը բնորոշելու համար մենք մեղ թույլ կտանք ոգտվել պ+ Վ+ Իվանովի «Վատ հերյուրանք» հոդվածի միջի («ՀՈՅԵ ԸԼՈՅԸ, սեպտ. 1897թ.») գեղեցիկ նկատողություններից: Հեղինակը խոսում ե պ. Բոբորիկինի «Ռւրիշ կերպ» («Պօ ձրցուց») հայտնի վեպի մասին և մերկացնում նրան, վոր չի հասկանում նաևող-նիկների վեճը «աշակերտների» հետ: Պ-ն Բոբո-րիկինն իր վեպի նարողնիկ հերոսի բերանը «աշա-կերտների» հասցեյին այնպիսի հանդիմանու-թյուն ե դնում, թե իրը նրանք յերազում են «կանոնակարգի անտանելի բռնակալություն ունե-ցող դորանոցի մասին»: Պ-ն Վ+ Իվանովը դրա առթիվ նկատում ե+

«Կանոնակարգի»՝ իբրև իբրեւնց հակառակորդ-ների «ցնորքի» անտանելի բռնակալության մա-սին նրանք (նարողնիկները) վոչ միայն չեն խոսել այլով, նարողնիկ մնալով, խոսել չեն կարող յեվ

չեն խոսի: Այդ բնագավառում «եկոնոմիստ մա-տերիալիստների» հետ նրանց վեճի եյությունը հենց այն ե, վոր հին կանոնակարգի մեզ մոտ պահ-պանված մնացորդները, նարողնիկների կարծիքով, կարող են հիմք ծտույել կանոնակարգի հետագա-ղարգացման համար: Այդ հին կանոնակարգի ան-տանելիությունը նրանց աչքից, մի կողմից, վա-րագուրվում ե այն պատկերացումով, թե իբր ինքը «գյուղացիական հոգին (միասնական և ան-բաժան) եկոլուցիա յե կատարում» կանոնա-կարգի կողմը, —մյուս կողմից, այն համոզմուն-քով, թե դոյցություն ունի կամ պետք ե գա «ինտելիգենցիայի», «հասարակության» կամ աւ-հասարակ «ղեկավարող դասակարգերի» բարոյա-կան գեղեցկությունը: Նրանք տնտեսական մա-տերիալիստներին մեղադրում են, վոր նրանք աչառու յեն վոչ թե գեպի կանոնակարգը, այլ, ընդհակառակը, գեպի արևմտայելքոպական կար-գերը, վորոնք հիմնված են կանոնակարգի բացա-կայության վրա: Յեվ տնտեսական մատերիալիստ-ներն իրոք պնդում են, թե բնատնտեսության հիման վրա աճած հին կանոնակարգի մնացորդ-ներն որո՞րի վրա ավելի «անտանելի» յեն դառնում մի յերկրում, վորն անցել ե դրամա-կան տնտեսության, վորը նրա բնակչության զա-նազան խավերի թե փաստական դրության մեջ

և թե մտավոր ու բարոյական պատկերի մեջ անհամար փոփոխություններ ե առաջ բերում։ Այդ պատճառով նրանք համոզված են, թե յերկրի տընտեսական կյանքի նոր բարերար «կանոնակարգի» ձագման համար անհրաժեշտ պայմանները կարող են զարգանալ վոչ թէ բնատնաեսությանը և ճորտատիրական իրավունքին հարմարեցրած կանոնակարգի մնացորդներից, այլ միայն այդ հին կանոնակարգի նույնպիսի լայն և բազմակողմանի բացակայության մթնոլորտում, ինչպիսին գոյություն ունի Արևմտյան Յեվրոպայի և Ամերիկայի առաջավոր յերկրներում։ Այսպիսի դրության մեջ ե գոնվում «կանոնակարգի» հարցը նարոդնիկների և նրանց հակառակորդների միջև (եջ 11—12, 1. օ.)։ Դեպի «հին կանոնակարգի մնացորդները» նարոդնիկների այդ վերաբերմունքը, թերևս, նարոդնիկության ամենակտրուկ հեռացումն ե «ժառանգության» տրադիցիաներից։ Այդ ժառանգության ներկայացուցիչներն, ինչպես տեսանք, աչքի ելին ընկնում հին կանոնակարգի բոլոր ու ամեն տեսակի մնացորդների անվերադրձ ու կատաղի դատապարտումով։ Հետևաբար, «աշակերտներն» այդ տեսակետից անհամեմատ պեղի մոտ են 60-ական թվականների «արագիցիաներին» և «ժառանգությանը», քան նարոդնիկները։

Սոցիոլոգիական ռեալիզմի բացակայությունը, նարոդնիկների հիշված վերին աստիճանի կարևոր սխալից զատ, նրանց մոտ տանում ե նույնպես դեպի մտածողության և հասարակական դործերի ու հարցերի մասին դատելու այն հատուկ յեղանակը, վորը կաբելի յե անվանել նեղ-ինտելիգենտական ինքնականություն կամ, թերևս, բյուրոկրատական մտածողություն։ Նարոդնիկը միշտ դատում ե այն մասին, թե «մենք» ինչ ուղիղ պետք ե ընտրենք հայրենիքի համար, ինչ փորձանքներ կհանդիպեն, յեթե «մենք» հայրենիքն ուղղենք դեպի այս-ինչ ուղին, ինչ յելքեր կարող ելինք «մենք» ապահովել մեղ համար, յեթե անցնելինք պառակ Յեվրոպայի անցած ուղու վասնակների կողքով, յեթե «լավագույնը» վերցնելինք թե Յեվրոպայից և թե մեր վաղեմի համայնականությունից և այն և այն։ Այստեղից՝ նարոդնիկի լիակատար անվստահությունն ու արհամարհանքը դեպի պատմությունն իրենց շահերի համեմատ կերտող առանձին հասարակական դասակարգերի ինքնուրուցյան տեսնդենցիները։ Այստեղից՝ այն ապշեցուցիչ թեթևամտությունը, վորով նարոդնիկը (մոռանալով իրեն շըջապատող միջավայրը) սոցիալական ամենատեսակ պրոֆեկտորության և դիմում, սկսած վորեւ «հողագործական աշխատանք կազմակերպելուց» և վեր-

Չայքրած մեր «հասարակության» ջանքելով «արտադրությունը աշխարհով անելով»: «Mit der Gründlichkeit der geschichtlichen Action wird der Umfang der Masse zunehmen, deren Action sie ist»\*—այս բառերի մեջ արտահայտված ե այն պատմա-փիլիսոփայական թեորիայի ամենախոր և ամենակարևոր գրույթներից մեկը, վոր մեր նարողնիկները վոչ մի կերպ չեն ցանկանում և չեն կարող հասկանալ: Մարդկանց պատմական ստեղծագործությունն ընդլայնման ու խորացման հետ մեկտեղ պետք ե աճի նաև բնակչության այն մասսայի չափը, վորը պատմական դիտակից գործիչ ե համոդիսանում: Իսկ նարողնիկը բնակչության մասին տոհմասարակ և աշխատավոր բնակչության մասին միշտ գտաել ե իրեն այս կամ այն շատ կամ քիչ բանական միջոցառումների մասին, իրեն մի նյութի մասին, վորը պետք ե ուղղվի գեպի այս կամ այն ուղին, և բնակչության աարբեր դասակարգերին յերբեք չի նայել իրեն ինքնուրույն պատմական գործիչների՝ տվյալ ուղու ժամանակ, յերբեք հարց չի դրել տվյալ ուղու այն պայմանների մասին, վորոնք

կարող են զարգացնել (կամ, լնդհակառակը, անդամակուծել) պատմության այդ կերպիչների ինքնուրույն ու դիտակից գործունեյությունը:

Այսպես, թեպետ լուսավորիչների «Ժառանգության» հանդեպ նարողնիկությունը խոշոր քայլ ե արել դեպի առաջ, դնելով կապիտալիզմի հարցը Ռուսաստանում, բայց այդ հարցին նրա տված լուծումը, մանր-բուրժուական տեսակետի և կապիտալիզմի սանտիմենտալ քննադատության հետեանքով, այնքան անբավարար դուրս յեկավ, վոր նարողնիկությունը հասարակական կյանքի մի ամբողջ շարք կարեորագույն հարցերում «լուսավորիչների» համեմատությամբ ավելի նետ մնաց: Նարողնիկության միացումը ժառանգությանը և մեր լուսավորիչների տրադիցիաներին՝ վերջիվերջո մինուս դուրս յեկավ այն նոր հարցերը, վոր ուղարկան հասարակական մտքի առջև դրեց Ռուսաստանի հետուքորմյան անտեսական դարդացումը, նարողնիկությունը չլուծեց, նրանց առթիվ սանտիմենտալ և ուսակցիոն վայնասունով սահմանափակվելով, իսկ այն հին հարցերի վրա, վոր գեռես լուսավորիչներն եյին դրել, նարողնիկությունը գիզաբարդեց իր սոմանտիկան և կասեցրեց նրանց լիակատար լուծումը:

\* Marx, „Die heilige Familie“, 120: Բոս Բելտովի էջ 235: («Պատմական գործողության հիմնավորության հետ միասին կաճի այն մասսայի ծագալը, վորի գործն և նա»:—Մարքս, «Սուրբ ընտանիք», Խմբ.):

«ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԸ», ՆԱՐՈԴՆԻԿՆԵՐԸ  
ՅԵՎ «ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ»

Մենք այժմ կարող ենք տալ մեր գուգահեռ-  
ների հանրագումարը։ Փորձենք համառոտակի  
բնութագրել հասարակական մտքի՝ վերնադրում  
նշված հոսանքներից յուրաքանչյուրի հարաբերու-  
թյունը մեկը մյուսին։

Լուսավորիչը հավատում է տվյալ հասարա-  
կական զարգացմանը, վորովհետև չի նկատում  
նրան հատուկ հակասությունները։ Նարոդնիկը  
վախենում է տվյալ հասարակական զարգացումից,  
վորովհետև նա նկատել է արդեն այդ հակասու-  
թյունները։ «Աշակերտը» հավատում է տվյալ հա-  
սարակական զարգացմանը, վորովհետև նա լա-  
վագույն ապագայի յերաշխիքները տեսնում ե-  
միայն այդ հակասությունների լիակատար զար-  
գացման մեջ։ Ուստի և առաջին և վերջին ուղ-  
ղությունը ձգտում է զարգացումը պահպանել  
արագացնել դյուրացնել տվյալ ուղիով, վերացնել  
այդ զարգացմանը խանգարող և նրան կասեցնող  
ընդուր խոշնդուաները։ Նարոդնիկությունն, ընդ-  
հակառակը, ձգտում է կասեցնել և կանգնեցնել  
այդ զարգացումը, վախենում է կապիտալիզմի  
զարգացման միքանի խոշնդուաները վոչնչացնե-  
ցած

լուց։ Առաջին և վերջին ուղղությունը նրանով  
ե բնորոշվում, վոր կարելի յե պատմական լավա-  
տեսություն անվանել. գործերն ինչքան ավելի  
հեռուն և ինչքան ավելի արագ գնան այսպես,  
ինչպես գնում են, այնքան ավելի լավ։ Նարոդ-  
նիկությունն, ընդհակառակը, բնականաբար տա-  
նում է դեպի պատմական հոռեատեսությունն. գոր-  
ծերն ինչքան ավելի հեռուն գնան այսպես, այն-  
քան ավելի վատ։ «Լուսավորիչները» բնավ չեն  
դրել հետուեֆորմյան զարգացման բնույթի հար-  
ցերը, սահմանափակվելով բացառապես մինչուե-  
ֆորմյան կարգերի մնացորդների դեմ պատերազ-  
մելով, սահմանափակվելով Ռուսաստանի յեվրո-  
պական զարգացման համար ճանապարհ մաքրելու  
բացասական խնդրով։ Նարոդնիկությունը դրեց  
կապիտալիզմի հարցը Ռուսաստանում, բայց այն  
լուծեց կապիտալիզմի ռեակցիօնության իմաս-  
տով, այդ պատճառով ել չեր կարող ամբողջու-  
թյամբ ըմբռնել լուսավորիչների ժառանգու-  
թյունը։ Նարոդնիկները միշտ պատերազմ են մղել  
այն մարդկանց դեմ, ովքեր ձգտել են Ռուսաս-  
տանը յեվրոպականացնել առնասարակ, «քաղա-  
քակարթության միանականության» տեսակետից,  
պատերազմ են մղել վոչ թե միայն այն պատ-  
ճառով, վոր նրանք չեյին կարող սահմանափակ-  
վել այդ մարդկանց իդեալներով (այդպիսի պա-

տեղագմն արդարացի կլիներ), այլ վորովհետեւ նրանք չեյին ուղղում ալյալ, այսինքն կապիտալիստական, քաղաքակրթության զարգացման մեջ այնքան հեռու գնալ: «Աշակերտները» կապիտալիզմի հարցը նույսաստանում՝ լուծում են նրա պրոգրեսիվության իմաստով և այդ պատճառով վոչ միայն կարող են, այլև պարտավոր են ամբողջությամբ ընդունել լուսավորիչների ժառանգությունը, լրացնելով այդ ժառանգությունը կապիտալիզմի հակասությունների վերլուծումով տնտեսագույքի արտադրողների տեսակետից: Նուսավորիչներն իրեն իրենց հատուկ ուշադրության առարկա չեն առանձնացրել բնակչության վոչ մի դասակարգ, խոսում եյին վոչ միայն ժողովրդի մասին ընդհանրապես, այլ նույնիսկ ազգի մասին ընդհանրապես: Նարոդնիկները ցանկանում եյին ներկայացնել աշխատանքի շահերը, չնշելով, սակայն, տնտեսության ժամանակակից սիստեմի մեջ վորոշ խմբերու գործով նրանք միշտ կանգնում եյին մանր արտադրողի տեսակետին, վորին կապիտալիզմը փոխարկում է ապրանքարտադրողի: «Աշակերտները» չափանիշ վերցնում են վոչ միայն աշխատանքի շահերը, այլև ընդդիմին նշում են կապիտալիստական տնտեսության վիտին վորոշ տնտեսական խմբեր, այն ե՛տնտեսագույք արտադրողներին: Առաջին և վերջին

ուղղությունը, ըստ իրենց ցանկությունների բովանդակության, համապատասխանում են այն դասակարգերի շահերին, վորոնք ստեղծում ե զարգացնում ե կապիտալիզմը: Նարոդնիկությունն ըստ իր բովանդակության համապատասխանում ե մանր արտադրողների, մանր բուրժուազիայի շահերին, վորը ժամանակակից հասարակության ուրիշ դասակարգերի միջև միջանկալ գրություն ունի: Այդ պատճառով նարոդնիկության հակասական վերաբերմունքը դեպի «ժառանգությունը» բնավ պատահականություն չե, այլ նարոդնիկական հայացքների բուն իսկ բովանդակության անհրաժեշտ արդյունքը, մենք տեսանք, վոր լուսավորիչների հայացքների հիմնական գծերից մեկը նույն նարոդնիկները վոչ մի կերպ չեն կարող, առանց նարոդնիկներ լինելուց դադարելու, լիովին ունենալ այդ ձգտումը:

Վերջիվերջո մենք ատացանք, ուրեմն, այն հետեւությունը, վոր մենք վերը բազմիցս նշել ենք մասնավոր առիթներով, այն ե՛տ աւակերտերը ժառանգության անհամեմատ ավելի նետքողական, անհամեմատ ավելի հավատարիմ պահողներն են, քան նարոդնիկները: Նրանք վոչ միայն չեն հրաժարվում ժառանգությունից, այլ, ընդհակառակը, իրենց ամենագլխավոր խնդիրներից մեկը

համարում են այն ռոմանտիկ և մանր-բուրժուական յերկուզները, վորոնք նարովնիներին հարկադրում են չափազանց շատ և չափազանց կարուր կետերում հրաժարվել լուսավորիչների յեվրոպական իդեալներից։ Բայց ինքնին հասկանալի յե, վոր «աշակերտները» ժառանգությունը պահում են վոչ այնպես, ինչպես արխիվարիտուսները հին թուղթն են պահում։ Ժառանգություն պահել՝ բնակ դեռ չի նշանակում ժառանգությունով սահմանափակվել, և «աշակերտները» յեվրոպականության ընդհանուր իդեալների պաշտպանությանը միացնում են այն հակասությունների վերլուծությունը վոր իր մեջ պարունակում են կապիտալիստական զարգացումը, և այդ զարգացման գնահատականը վերոհիշյալ սովեցիֆիկ տեսակետից։

## V

### Պ. ՄԻԽԱՅԼՈՎՍԿԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ «ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ» ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իբրև յեզրակացություն դարձյալ վերադառնանք պէս Միխայլովսկուն և մեզ հետաքրքրուզ հարցում նրա պնդման քննությանը։ Պէս Միխայլովսկին հայտարարում ե վոչ միայն այն, թե այդ մարդիկ (աշակերտները) «չեն ցանկա-

նում վոչ մի ժառանգական կանչի մեջ լինել անցյալի հետ և վճռականապես հրաժարվում են ժառանգությունից» (և և, 179), այլև բացի թե «նրանք» (ամենատարբեր ուղղությունների այլ անձերի կողքին, ներառյալ մինչև պ. Աբրամովը, պ. Վոլինսկին, պ. Ռոզանովը) «ժառանգության վրա յեն հարձակվում ծայրանեղ չարությամբ» (180)։—Ի՞նչ ժառանգության մասին ե խոսում պ. Միխայլովսկին։—60—70-ական թվականների ժառանգության մասին, այն ժառանգության մասին, վորից հանդիսավորապես հրաժարվում եր և հրաժարվում ե «Մոսկովսկի ՎԵՐԱԿՐՈՆԻ» (178)։

Մենք արդեն ցույց տվինք, վոր յեթե խոսնաք ժամանակակից մարդկանց բաժին ընկած «ժառանգության» մասին, ապա պետք ե տարբերել յերկու ժառանգություն։ մեկ ժառանգությունն ընդհանրապես լուսուվորիչներին ե, մարդկանց, վորոնք անպայման թշնամի յեն այն առանց, վորոնք անպայման թշնամի յեն այն առանց, մարդկանց, վորոնք պաշտպան են յեվրոպական իդեալներին և ընակչության լայն մասսայի շահերին։ Մյուս ժառանգությունը նարողնիկականն ե։ Մենք արդեն ցույց տվինք, վոր կոպիտ սիսակիներ այդ յերկու տարբեր իրերը շփոթելը վոկինետի ամեն վոք գիտե, վոր կային և կան բովիետի ամեն վոք գիտե, վոր կային և

մարդիկ, վորոնք պահում են «60-ական թվականների տրադիցիաները» և ընդհանուր վաշինչ չունեն նարողնիկության հետ: Պ-ն Միխայլովսկու բոլոր նկատողություններն ամբողջությամբ և բացառապես հիմնված են այդ բոլորովին տարբեր ժառանգությունները շփոթելու վրա: Իսկ քանի վորով: Միխայլովսկին չի կարող չիմանալ այդ տարբերությունը, ապա նրա արտառոց յելույթն ստանում ե վոչ միայն անմիտ, այլև բանսարկութական արտառոց յելույթի բոլորովին վորոշ բնույթ: «Моск. ведомости»-ն հատկապես նարողնիկության վրա յեր հարձակվում: — Բնավ վոչ նա վոչ-պակաս, իբթե վոչ ավելի, հարձակվում եր ընդհանրապես լուսավորիչների վրա, և նարողնիկությանը բոլորովին խորթ «Вестник Европы»-ն նրանց համար վոչ պակաս թշնամի յե, քան նարողնիկական «Русское богатство»-ն: Այն նարողնիկների հետ, վորոնք առավելագույն վճռականությամբ եյին հրաժարվում ժառնությունից, որինակ՝ Յուզովի հետ, «Московские ведомости»-ն, ինարկե, շատ բանում չեր միանա, բայց դժվար թե չարությամբ հարձակվեյին նրա վրա, և համենայն դեպս կզովեր նրան այն բանի համար, ինչով նա տարբերվում է նարողնիկներից, վորոնք ցանկանում են ժառնությունը պահել: — Արդյոք պ. Արքամովը կամ

պ. Վոլխնսկին նարողնիկության վրա՝ յեր հարձակվում: — Բնավ վոչ նրանցից առաջինն ինքը նարողնիկ եւ նրանք յերկումն ել հարձակվում եյին ընդհանրապես լուսավորիչների վրա: — Հարձակվում եյին արդյոք «ուռասական աշակերտները» ոռուսական լուսավորիչների վրա: Հրաժարվում եյին արդյոք նրանք յերեւե ժառնությունից, վոր մեզ ավանդում եր անսպայման թշնամություն դեպի մինչուե ֆորմյան կենցաղն ու նրա մնացորդները: — Վոչ միայն չեյին հարձակվում, այլ ընդհակառակը, մերկացնում եյին նարողնիկների ձգտումը՝ այդ մնացորդներից միքանիսին պաշտպանել կապիտալիզմի առջև մանը-բուրժուական յերկյուղների խաթեր: — Նրանք յերբեկցե հարձակվում եյին ժառնության վրա, վորը մեզ ընդհանրապես յեկրոպական իդեալներ եր ավանդում: — Վոչ միայն չեյին կան ժառնիկների արձակվում: Եյին ժառնության մերկացնում եյին, վոր նրանք համայեկրոպին իդեալների փոխարեն չափազանց կապական իդեալների փոխարեն չափազանց կարևոր շտահ հարցերում՝ ինքնագոյն բարեհիմարություններ են նարում: — Նրանք յերեւե հարձակվում եյին արդյոք ժառնության վրա, վորը մեզ վում եյին արդյոք ժառնության վրա, վորը մեզ ավանդում եր հոգ տանել բնակչության աշխատավոր մասսաների շահերի մասին: — Վոչ միայն չեյին հարձակվում, այլ ընդհակառակը, նարողնիկ-

ներին մերկացնում եյին, վոր անհետանզական  
ե նրանց հոգատարությունն այդ շահերի մասին  
(վորովհետև նրանք ուժեղապես շփոթում են գյու-  
ղացիական բուրժուազիան և գյուղական պլոտե-  
տարիատը). վոր այդ հոգսերի տված ոգուար  
թուլացվում ե յերազանքներով այն մասին, թե  
ինչ կարող եր լինել, փոխանակ իր ուշադրու-  
թյունը դարձնելու այն բանին, ինչ կա. վոր  
նրանց հոգսերը չափազանց նեղ են, վորովհետև  
նրանք յերբեք չեն կարողացել ըստ արժան-  
վույն գնահատել այն (տնտեսական և ուրիշ) պայ-  
մանները, վորոնք այդ անձերի համար հեշտաց-  
նում կամ դժվարացնում են նրանց իրենց մա-  
սին հոգալու հնարավորությունը:

Պ-ն Միխայլովսկին կարող ե չհամաձայնվել  
այդ մերկացումների ճշտությանը և, նարոդնիկ  
լինելով, նա, հասկանալի յե, չի համաձայնվի  
դրանց,—բայց խոսել «60—70-ական թվականների  
ժառանգության» վրա այն մարդկանց «չար» հար-  
ձակումների մասին, վորոնք իրոք «չարորեն» հար-  
ձակում են միայն նարոդնիկության վրա, հար-  
ձակվում են նըս համար, վոր նա չկարողացավ  
հետոեֆորմյան պատմության առաջ քաշած նոր  
հարցերը լուծել առ ժառանգության վորով յեվ  
առանց նրան հակասելու, — նման բան առել՝ նշա-  
նակում ե ուղղակի խեղաթյուրել գործը:

Պ-ն Միխայլովսկին շատ զվարճալի կերպով  
դայրանում ե, վոր «աշակերտները» «մեզ» (այսին-  
քըն «Русское богоатство»-յի հրապարակախոս-  
ներին) հոժարությամբ շփոթում են «նարոդնիկ-  
ների» և ուրիշ անձերի հետ, վորոնք «Բ. Յ.»-յի  
հետ առնչություն չունեն (Եջ 180): Իրեն «նա-  
րոդնիկների» թվից առանձնացնելու այդ արարորի-  
նակ վորձը, միաժամանակ նարոդնիկության բոլոր  
հիմնական հայացքները պահելով, ծիծաղից բացի  
վոչինչ չի կարող առաջ բերել: Ամեն վոք գիտե, վոր  
բոլոր «ոռուական աշակերտները» ճնարովնիկ» և  
«նարոդնիկություն» բառերը գործ են ածում  
լայն իմաստով: Վոր նարոդնիկների միջև քիչ չեն  
զանազան յերանգավորումները, այդ վոչ չի  
մոռացել և չի ժիտել. վոչ Պ. Մտրուվեն, վոչ Ն.  
Բելտովը, որինակ, իրենց զրքերում պ-ն Ն. Միխայլովսկինը  
չեն «շփոթել» վոչ միայն պ. Վ. Վ.-ի  
հետ, այլնաև պ. Ցուժակովի հետ, այսինքն չեն սքո-  
ղել նրանց հայացքների տարբերությունը, մեկի հա-  
յացքները մյուսին չեն վերագրել: Պ. Բ. Մտրու-  
վեն նույնիսկ ուղղակի նշում եր պ. Ցուժակովի  
հայացքների տարբերությունը պ. Միխայլովսկու-  
հայացքներից: Զանազան հայացքներ իրար շփո-  
թելը մի բան ե. ուրիշ բան ե՝ ընդհանրացնել և  
մի կատեգորիայի տակ բերել զրոյների, վորոնք,  
չնայած շատ հարցերում ունեցած տարբերու-

թյուններին, համերաշխ են այն հիմնական և գըլ-խավոր կետերում, վորոնց գեմ եւ վոր ապստամբում են «աշակերտները»։ «Աշակերտի» համար կարևոր բնավ այն չեւ, վոր ցույց տրվի, որինակ, վորնեւ պ. Յուղովին ուրիշ նարոդնիկներից տարբերող հայացքների անպետքությունը. Նրա համար կարևոր եւ հերքել պ. Յուղովին յեզ պ. Միխայլովսկուն ու բոլոր նարոդնիկներին առհասարակ ընդհանուր հայացքները, այսինքն նրանց վերաբերմունքը դեպի Ռուսաստանի կապիտալիստական եվոլուցիան, անտեսական և հրապարակախոսական հարցերի նրանց քննարկումը մանր արտադրողի տեսակետից, սոցիալական (կամ պատմական) ժատերիալիզմի նրանց չհասկանալը։ Այդ գծերն ընդհանուր սեփականությունն են հասարակական ժաքի մի ամբողջ հոսանքի, վորը պատմական խոշոր դեր եւ կատարել։ Այդ լայն հոսանքի մեջ ամենաբազմազան յերանգավորումներ կան, կան աջ և ձախ թերեր, կան մինչև հացիոնալիզմ և հակահետեականություն իջած մարդիկ և այլն, և կան մարդիկ, վորոնք այդ հանցանքը չունենալ կան մարդիկ, վորոնք արհամարհանքով են վերաբերիկել «Ժառանգության» շատ ավանդներին, և մարդիկ կան, վորոնք աշխատել են, վորքան հնարավոր եւ, պաշտպանել այդ ավանդները (այսինքն վորքան հնարավոր եւ նարոդնիկի

համար)։ «Իուսական աշակերտներից» վոչ մեկը չի ժիտել այդ արթբերությունները յերանգավորումների միջև, նրանցից վոչ մեկին պ. Միխայլովսկին չեր կարող մեղափոր բանել այն բանի համար, վոր նա մի յերանգի նարոդնիկի հայացքը վերագրում եր մի ուրիշ յերանգի նարոդնիկի։ Բայց քանի վոր մենք հանդես ենք գալս այդ բոլոր տարբեր յերանգավորումներին ընդհանուր համար հիմնական հայացքների գեմ, ել ինչ հաշվիվ կա խոսելու ընդհանուր հոսանքի մասնավոր տարբերությունների մասին։ Չե՞ վոր այդ բոլորովին անխմանստ պահանջ եւ Ռուսական կապիտալիզմի, գյուղացիական «համայնքի», այսպես կոչված՝ «հասարակության» ամենակարողության մասին հայացքների ընդհանրությունը այն գրողների, վորոնք ամենակին ամեն բանում ել համերաշխ չեն, մեր գրականությունը բազմիցս նշել եւ գեռ «աշակերտների» յերևան գալուց շատ առաջ, և վոչ միայն նշել այլև գովաբանել երբեք Ռուսաստանի մի յերջանիկ առանձնահատկություն։ «Նարոդնիկություն» տերմինը լայն իմաստով գործածվել եւ մեր գրականության մեջ դարձյալ «աշակերտների» յերևան գալուց շատ առաջ։ Պահ Միխայլովսկին վոչ միայն շատ տարիներ միենալոյն ժուրնալում աշխատակցել եւ «նարոդնիկ» (նեղ իմաստով) պ. Վ. Վ. ի հետ, այլև հայացքների վերը հիշված ընդ-

համուը հիմնական գծերն ուներ նրա հետ։ 80-ական և 90-ական թվականներին՝ առարկելով պ. Վ. Վ. -ի առանձին հետեւթյունների դեմ, ժիաելով վերացական սոցիոլոգիայի բնագավառը նրա արած եքսկուրսիաների ճշտությունը, պ. Միխայլովինին, ուսկայն, թե 80-ական և թե 90-ական թվականներին վերապահություն եր անում, զորի քննադատությունը բնավ չի ուղղված պ. Վ. -ի անտեսազիտական աշխատությունների դեմ, զոր ինքը ոռուսական կապիտալիզմի վերաբերյալ հիմնական հարցերում համերաշխ ե նրանց հետ։ Ուստի, յեթե «Русское богоатство»-ի սյուները, վորոնք այնքան շատ բան են արել նարոդիկական (լայն իմաստով) հայացքների զարգացման, ամրապնդման և տարածման համար, այժմ մտածում են «ոռուսական աշակերտների» քննադատությունից ազատվել մի պարզ հայտարարությունով, թե իրենք «նարոդնիկներ» չեն (նեղ իմաստով), թե իրենք մի բոլորվին այլ «եթիկո-սոցիոլոգիական դպրոց» են, — ապա, հասկանալի յի, նման խորսափանքները միմիայն արդարացի ծիծաղ են հարուցում այն մարդկանց վրա, զորոնք այդքան քաջ են և միաժամանակ այդք նու գիշանագետ։

Իր հոդվածի 182-րդ եջում պ. Միխայլովին աշակերտների» դեմ առաջ ե քաշում նուն հե-

ուկյալ արտասովոր վաստավլկը։ Պ-ն կամենսկին թունալի հարձակում և նարոդնիկների վրա, այդ, հաճեցեք տեսնել, «վկայում ե, վոր նա զայրանում ե, իսկ այդ նրան արժան չե (sic!!)։ Մենք, «ուրբյեկտիվ ծերունիներս», ինչպես նաև սուրյեկտիվ պատանիները», առանց մեզ հակասելու, մեզ թույլ ենք տալիս այդ թուլությունը։ Բայց «իր անողոք ոբյեկտիվությամբ արդարացիորեն հպարտ» («աշակերտներից» մեկի արտահայտությունը) ուսմունքի ներկայաչուցեհներն ուրիշ դրության մեջ են)։

Այս ի՞նչ բան ե; Յեթե մարդիկ պահանջում են, զորպեսզի սոցիալական յերկույթների մասնին հայացքները հենվեն իրականության և իրական զարգացման անողոքորեն ոբյեկտիվ վերլուծության վրա, — ապա դրանից հետևում ե, զոր նրանց արժան չե զայրանալը։ Ախր այդ ուղղակի անիմաստ բառակույտ ե, սառու և սմյակ։ Չեք լսել արդյոք դուք, պ. Միխայլովսկի, այն մասին, զոր հասարակական յերկույթների հետազոտման մեջ անողոք ոբյեկտիվության ամենանշանավոր նմուշներից մեկն արդարացիորեն համարվում ե «Կապիտալի» մասին հոչակագոր տրակտատը։ Մի ամբողջ շարք գիտնականներ և տնտեսագետներ այդ արակտատի գլխավոր և հիմնական թերությունը գտնում

Են հեզաց նրա անողոք որյեկտիվության մեջ:  
 Յեկ սակայն հաղվագյուտ դիտական տրակտատի  
 մեջ գուբ կդունեք այնքան «սիրտ», այնքան տաք  
 ու կըքոտ բանավիճային յելութներ հետամնաց  
 հայացքների ներկայացուցիչների դեմ, այն հա-  
 սարակական դասակարգերի ներկայացուցիչների  
 դեմ, վորոնք, հեղինակի համոզումով, արգելա-  
 կում են հասարակական դարձացումը: Մի գրող,  
 վորն անողոք որյեկտիվությամբ ցույց տվեց,  
 վոր, ասենք, Պրուդոնի հայացքները ֆրանսական  
 retit bourgeois-ի \* հայացքների և տրամադրու-  
 թյան բնական, համակարգի, ամիսուսափելի արտա-  
 ցոլումն են,—այնուամենայնիվ մեծագույն կրքո-  
 տությամբ, ջերմ զայրույթով «հարձակվում եր»  
 մանը բուրժուազիայի այդ իդեոլոգի վրա: Զի՞  
 յենթադրում արդյոք պ. Միխայլովսկին, թե  
 Մարքոն այստեղ «հակասում եիրեն»: Յեթե հայտ-  
 նի մի ուսմունք յուրաքանչյուր հասարակական  
 գործչից պահանջում ե իրականության և այդ  
 իրականության հողի վրա տարբեր դասակարգերի  
 միջև կազմավորվող հարաբերությունների անո-  
 դոք որյեկտիվ վերլուծություն,—ապա ի՞նչ  
 հրաշքով կարելի յե այստեղից հետեւթյուն անել,  
 թե հասարակական գործիչը չպետք է համակրի

\*— մանը բուրժուատ:— ԽՄԲ:

այս կամ այն դասակարգին, թե այդ նրան «ար-  
 ժան չե»: Ծիծաղելի յե այստեղ նույնիսկ պարտ-  
 քի մասին խոսելը, վորովհետեւ վոչ մի կենդա-  
 նի մարդ չի կարող այս կամ այն դասակարգի  
 կողմնակից չդառնալ (քանի վոր հասկացել ե  
 նրանց փոխարաբերությունները), չի կարող  
 չուրախանալ տվյալ դասակարգի հաջողությամբ,  
 չի կարող չվշտանալ նրա անհաջողություններով,  
 չի կարող չզայրանալ նրանց վրա, ովքեր թշնա-  
 մի յեն այդ դասակարգին, նրանց վրա, ովքեր  
 սխալ հայացքներ տարածելով խանգարում են  
 նրա զարգացմանը և այն և այն: Պ. Ն Միխայլովսկու  
 դատարկամիտ յելույթը ցույց է տալիս միայն,  
 վոր նա մինչև այժմ գլուխ չի հանել դետերմի-  
 նիզմը Փատաղիզմից տարբերելու տարբական  
 հարցում:

«Կապիտալը գալիս և—այդ անտարակույս ե»,  
 —գրում ե պ. Միխայլովսկին, —«բայց (sic!!)  
 հարցն այն և, թե նրան ինչպես դիմավորել»  
 (Եջ 189):

Պ. Ն Միխայլովսկին Ամերիկա յե գտնում,  
 նշում ե մի «հարց», վորի մասին, հասկանալի յե,  
 «ուսւական աշակերտները» ամենեին. չեն ել խոր-  
 հել: Յերեի այդ հարցում չե, վոր պառակտվեցին  
 «ուսւական աշակերտները» նարողնիկներից:  
 Թուսաստանում զարդացող կտակիտալիզմը «դի-

մավորել» կտրելի յե միայն յերկու կերպ՝ կամ այն պրոգրեսիվ յերեռյթ ճանաչել կամ ռեգրեսիվ կամ մի քայլ առաջ իսկական ուղիով, կամ թեքվելով ճիշտ ուղուց կամ նրան գնահատել մանր արտադրողների դասակարգի տեսակետից, վորին ավերում ե կապիտալիզմը, կամ՝ տնտեսազուրկ արտադրողների դասակարգի տեսակետից, վոր կապիտալիզմն ե ստեղծում։ Այստեղ միջին տեղ չկա\* չետևաբար, յեթե պ. Միխայլովսկին ժխտում ե դեպի կապիտալիզմը այն վերաբերմունքի ճշտությունը, վոր «աշակերտներն» են պնդում, ապա նա, նշանակում ե, ընդունում ե նարոդ-նիկական վերաբերմունքը, վոր նա շատ անդամ լիակատար փորոշակիությամբ արտահայտել ե իր նախկին հոդվածներում։ Պ-ն Միխայլովսկին այդ հարցի վերաբերմամբ իր հին հայացքների մեջ վոչ մի վոչ լրացում և վոչ փոփոխություն չի

\* Մենք, հասկանալի յե, չենք խոսում այն դիմավորման մասին, վորը բնավ հարկավոր չի համարում զեկավարվել աշխատանքի շահերով, կամ վորի համար «կապիտալիզմ» տերմինով արտահայտվող ընդհանրացումն ինքն անհասկանալի և անհամոզիչ եւ ինչքան ել ուսւական կյանքում կարենը են հասարակական մտքի սրան վերաբերող հոսանքները, բայց նարոդնիկների և նրանց հակառակորդների մեջն յեղած վեճում նրանք բռնորդին անսեղի յեն և հարկ ել չկա դրանք բանի մեջ խառնելու։

տվել և չի տալիս, մնալով առաջվա պես նարոդ-նիկ։—Հետ կլինի վոր։ Նա նարոդնիկ չե, աստված մի արասցե։ Նա «եթիկո-սոցիոլոգիական դպրոցի» ներկայացնուցիչ ե»։

«Թող չխոսեն»,—շարունակում ե պ. Միխայլովսկին, —«այն ապագա (?) բարիքների մասին, վոր իր հետ կբերի (?) կապիտալիզմի հետագա դարձացումը»։

Պ.ն Միխայլովսկին նարոդնիկ չե, նա միայն ամբողջությամբ կրկնում է նարոդնիկների սխալները և նրանց դատողությունների սխալ յեղանակները։ Քանի անգամ արգեն նարոդնիկներին ասել են, վոր «ապագայի մասին» հարցի նման գրումը ճիշտ չե, վոր խոսքը վերաբերում ե մինչեւ կապիտալատական հարաբերությունների վոչ թե «ապագա», այլ իսկական, արգեն տեղի ունեցող, պըոգրեսիվ փոփոխություններին, — փոփոխություններ, վորոնք բերում ե (և վոչ թե կբերի) կապիտալիզմի դարձացումը Ռուսաստանում։ Հարցըն «ապագայի» բնագավառը փոխադրելով, պ. Միխայլովսկին դրանով իսկ եյապես ապացուցված ե ընդունում այն գրույթները, վոր «աշակերտներն» ել հենց վիճարկում են։ Նա ապացուցված ե ընդունում, վոր, իրականում, այն բանում, ինչ մեր առջև կատարվում ե, կապիտալիզմի դարձացումը հին հասարակական - տնտեսական հարաբերություններում առաջանակ է»։

ների մեջ վոչ մի պրոգրեսիվ փոխոխություն  
չի բերում։ Հենց այս եւ վոր կա նարողնիկական  
հայացքը, և հենց զրա դեմ եւ վոր բանավիճում  
են «ոռուսական աշակերտները», ապացուցելով  
հակառակը։ «Բոռուսական աշակերտների» լույս  
ընծայած և վոչ մի զրոյցի չկա, վորի մեջ  
չխոսվի և ցույց չտրվի, թե հողագործության  
մեջ աշխատավճարումները ազատավարձու աշխա-  
տանքով փոխարինելը, այսպէս կոչված «տնայ-  
նագործ» արդյունաբերությունը ֆարբիկայի-  
նով փոխարինելը մեր աչքի առջև կատարվող  
(և ընդդմին ահազին արագությամբ) մի իրական  
յերեսույթ ե, այլ բնավ վոչ միայն «ապագա»։  
թե այդ փոխարինումը բոլոր տեսակետներից  
պրոգրեսիվ յերեսույթ ե, թե նա կործանում ե  
ոռուտիսային, դարավոր անշարժությամբ ու քա-  
րացածությամբ աչքի ընկնող, կոտորակված,  
մանր, ձեռքի արտադրությունը թե նա բարձ-  
րացնում ե հասարակական աշխատանքի արտա-  
դրողականությունը և դրանով իսկ ստեղծում  
աշխատավորի կենսական մակարդակի բարձրաց-  
ման հնարավորություն։ թե հենց նա յե, վոր  
այնպիսի պայմաններ ե ստեղծում, վորոնք այդ  
հնարավորությունն անհրաժեշտություն են դարձ-  
նում, այն ե՝ «խուլ անկյունում» կորած «նըս-  
տակաց պրոլետարին», նստակյաց թե ֆիզիկա-

կան և թե բարոյական իմաստով, դարձում են  
շարժական, աշխատանքի ամիսական ձեռքը ան-  
վերջ զարգացած սարկությամբ, անձնական  
կախման ամենատեսակ ձեռքով՝ դարձնում են  
յերազական։ թե «մտքերի և զգացման յեվրոպա-  
կան յեղանակը մեքենաների հաջող ոգտակարաց-  
ման համար վոչ պակաս անհրաժեշտ ե (նկա-  
տեք՝ անհրաժեշտությունը՝ Վ. Ի.), քան շոգին, ածուխը և  
տեխնիկան»\* և այլն։ Այս բոլորն ասում և ապա-  
ցուցում ե, կրկնում ենք, յուրաքանչուր «աշա-  
կերտ», բայց այդ բոլորը յերեխ, վոչ մի առըն-  
չություն չունի պ. Միխայլովսկու և «ընկերների  
հետ այդ բոլորը գրվում ե միմիայն «Русское  
богатство»-յի հետ առնչություն չունեցող «նա-  
րոդնիկների» դեմ։ Զե վոր «Русское богатст-  
во»-ն «Եթիկո-սոցիոլոգիական դպրոց ե», վորի  
եյությունն այն ե, վոր նոր դրոշի տակ հին  
ցնցոտի անցկացնի։

Ինչպես վերն արդեն նկատեցինք, մեր հոդ-  
վածի խնդիրն ե՝ հերքել մերերալ-նարոդնիկա-  
կան մամուլում շատ տարածված այն հերյու-  
րանքները, իբր թե «ոռուսական աշակերտները»  
հրաժարվում են «ժառանգությունից», կապերը

\* Շուլցե. Գեվերնիցի խոսքերը «Schmollers Jahrbuch»-  
ում, 1896, Մոսկվա-Վլադիմիրի բամբակեղնի արդյու-  
նաբերության մասին նրա հոգվածի մեջ,

խղում են ոռւս հասարակության լավագույն մասի լավագույն տրադիցիաներից և այլն: Անհետաքը բրական չի լինի նշել վոր պ. Միխայլովսկին, կրկնելով այդ ծեծված ֆրազները, եյտղես ասց բոլորովին նույնը, ինչ անհամեմատ ավելի վաղ և անհամեմատ ավելի վճռականորեն հայտարարել ե «Русское богоатство»-ի հետ «առնչությունն չունեցող» «նարովնիկ» պ. Վ. Վ. -ն: Ծանոթ եք արդյոք, ընթերցող, «Неделя»-ի այն հոդվածներին, վոր յերեք տարի առաջ, 1894 թ. վերջին զետեղեց այդ գրովը ի պատասխան Պ. Բ. Ստրուվեյի գրքին: Պետք ե խոստովանեմ, վոր, իմ կարծիքով, դուք վոչ մի բան չեք կորցրել, յեթե դրանց չեք ծանոթացել: Այդ հոդվածների հիմնական միտքն այն ե, վոր իբր թե «ոռւսական աշակերտները» կտրում են այն դեմոկրատական թերը, վոր յերկարում ե ոռւսական հասարակական մտքի բոլոր պրոգրեսիվ հոսանքների միջով: Արդյոք պ. Միխայլովսկին այժմ նույնը չի կը դնում, միայն մի քիչ այլ արտահայտություններով, «աշակերտներին» մեղադրելով «ժառանգությունից» հրաժարվելու համար, վորի վրա («ժառանգության»: — Թարգմ.) չարությամբ հարձակվում ե «Московские ведомости»-ն: Իրոք, ինչպես տեսանք, այդ հերյուրանքի հեղինակները մեղավոր ուրիշն են բռնում, պնդելով, թե իբր «աշա-

կերտների» անդարձ խղումը նարողնիկությունից նշան ե ոռւսական հասարակության լավագույն մասի լավագույն տրադիցիաներից խղվելուն: Ընդհակառակ չե արդյոք, պարզնները: Այդպիսի խղումը նշան չե արդյոք, վոր այդ լավագույն տրադիցիաները մայրվում են նարողնիկությունից:

Արտագիշ Ա. Տ.-Մկրտչյան, Շատելու տրվեց 4 սպասարկ 1934 թ.  
Տպել բայլուստվեց 3 սեպտեմբերի 1934 թ. Ճառ. № 234. Խնդես  $\frac{\text{ՊԼԻ}}{\text{НП}}$   
Գլուխիս № 7869 (ր), Տիրած 4000. Պատվ. № 244, Թուրք Համբը 64x92  $\frac{1}{32}$   
3 տպ. թիր (1 տպ. թիրում 41,000 տպ. Յատի):  
Կունեամի տպարան, Յեղեղան, Սևանի վեցյան Փ. № 27

Корректор А. Т. Мкртчян. Сдано в набор 4 августа 1934 г.  
Подписано к печати 3 сентября 1934 г.

Армпартиздат № 234, Индекс  $\frac{\text{ՊԼԻ}}{\text{НП}}$

Типография Партиздата ЦК КП(б)А.  
Эривань, ул. Алабердин № 27

PROTETTORE STORICO  
REGGIMENTO 100

578

ԳՐԱՅԻ 60 Կ.

ЦЕНА 60 К.

Н Арм.

9-31962




В. И. ЛЕНИН

ОТ КАКОГО НАСЛЕДСТВА  
МЫ ОТКАЗЫВАЕМСЯ

ПАРТИЗДАТ 1934 ЭРИВАНЬ

ՀՀ Ազգային գրադարան



NL0181589

Apr  
H 2-3196a